

## ԹԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

(Անահիտ Մնացականի Մխիթարյան)

Բանաստեղծուհի, թարգմանչուհի, լրագրող:

ՀԳՄ անդամ է 2002-ից

Ծնվել է 1952 թվականի փետրվարի 9-ին, Երևան քաղաքում, զրոյ Մնացական Թարյանի ընտանիքում: 1959-1969 թվականներին սովորել և ավարտել է Երևանի Հովհաննես Պողոսյանի անվան N 82 միջնակարգ դպրոցը, 1969-1974 թվականներին՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը, իսկ 1979-1981 թվականներին՝ ՀԿԿ Կենտկոմի մարքսիզմ-լենինիզմի համալսարանի գաղափարախոսական կադրերի ֆակուլտետի փիլիսոփայության բաժինը:

Տարիներ շարունակ զբաղվել է մանկավարժական, լրագրողական ու խմբագրական գործունեությամբ՝ միշտ և ամենուր այն զուգորդելով գրական-ստեղծագործական աշխատանքին: 1974-1976 թթ.-ին աշխատել է Հրազդանի շրջանի Սոլակ գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցուիչ, 1976-1981 թվականներին՝ «Հրազդան» շրջանային թերթի խմբագրությունում՝ որպես գյուղատնտեսության բաժնի վարիչ: 1982 թվականից աշխատել է «Երեկոյան Երևան» թերթի, այնուհետև՝ «Պիոներ» (ներկայում «Աղբյուր») ամսագրի խմբագրություններում: 1985-1991 թվականներին նաև՝ որպես խմբագիր, ապա՝ որպես հասուկ աշխատանքի գծով ավագ տեսուչ, աշխատել է ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և զրքի առևտրի գործերի պետական կոմիտեում: 1992-2022 թվականներին աշխատել է ՀՀ կառավարության (ներկայում՝ ՀՀ վարչապետի) աշխատակազմում՝ որպես գլխավոր մասնագետ-խմբագիր:

Նրա ստեղծագործությունները՝ գրված թե՝ մեծերի և թե՝ մանուկների համար, մշտապես տպագրվել են մամուլում, գրական տարեգրերում, ալմանախներում, անթոլոգիաներում, հնչել՝ ռադիոյով ու հեռուստատեսությամբ: Առաջին արձակ գործը՝ «Միամիտ Էջը» հերթաքար, տպագրվել է 1964 թվականի մայիսին՝ «Պիոներ» ամսագրի 5-րդ համարում, իսկ առաջին բանաստեղծությունը՝ «Աքլորի Վիշտը», հրատարակվել է «Ծիծեռնակ» («Պիոներ») ամսագրի 9-րդ համարում 1964 թվականի սեպտեմբերին: Անահիտ Թարյանը հեղինակ է շուրջ երկուսուկես տասնյակ բանաստեղծական գրքերի: Կատարում է նաև գեղարվեստական թարգմանություններ: 2012 թվականին «Արձագանք» ռադիոկայանում

ձայնագրվել և թողարկվել է նրա «Իրիկնահաց» ձայնասկավառակը՝ ասմունքող Լիանա Զուրաբյանի ընթերցմամբ։ Անահիտ Թարյանը 1980 թվականից՝ նախկին ԽՍՀՄ, ապա Հայաստանի ժուռնալիստների միության, 1997-ից՝ Ռազմածովագիրների միջազգային ընկերակցության, իսկ 1999 թվականից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գրողների միության անդամ է։

Հայաստանի գրողների միության նախագահության ամենամյա՝ 2017 թվականի Վախթանգ Անանյանի անվան մրցանակը (մանկական) շնորհվել է Անահիտ Թարյանին՝ «Գիտնական իշտուկը» գրքի համար, «Ես քո զինվորն եմ, Հայաստան» գրքի համար շնորհվել է Հայաստանի գրողների միության և ՀՀ պաշտպանության նախարարության 2017 թվականի համատեղ մրցանակը (պոեզիա, 2-րդ մրցանակ), իսկ Հայաստանի գրողների միության 2022 թվականի Ծաղկաձորի ստեղծագործական տան Եղիշե Չարենցի անվան մրցանակն Անահիտ Թարյանին է շնորհվել «Մատյան սիրո» (պոեզիա) գրքի համար, և նա պարզեատրվել է համապատասխան մեդալով։ Հայաստանի գրողների միության նախագահության որոշմամբ Անահիտ Թարյանը հայ գրականությանը մատուցած ծառայությունների համար 2017 թ. օգոստոսի 23-ին պարզեատրվել է «Գրական վաստակի համար» մեդալով։ ՀՀ վարչապետի 2017 թ. նոյեմբերի 3-ի N 1260-Ա որոշմամբ պարզեատրվել է ՀՀ վարչապետի հուշամեդալով, իսկ ՀՀ վարչապետի 2013 թ. դեկտեմբերի 27-ի N1247-Ա որոշմամբ՝ ՀՀ վարչապետի շնորհակալագրով։

«Ով ով է, հայեր» կենսագրական հանրագիտարանում՝ ընդգրկված են Միխթարյանների ընտանիքից միաժամանակ երեքը՝ հայրը գրող Մնացական Թարյանը, դուստրը՝ բանաստեղծուհի Անահիտ Թարյանը, և որդին՝ ակադեմիկոս Նվեր Միխթարյանը։

## ԵՐԿԵՐ

1. Ես, դու և աշխարհը («Յոթ անուն» ժողովածու, բանաստեղծություններ): Եր., «Սովետական գրող» հրատ., 1984, 248 էջ, տպ.՝ 3000:
2. Երկնքի տատիկը (բանաստեղծություններ): Եր., «Սովետական գրող» հրատ., 1986, 44 էջ, տպ.՝ 5000:
3. Բախտախաղ (բանաստեղծություններ): Եր., «Խորհրդային գրող» հրատ., 1989, 112 էջ, տպ.՝ 3000:
4. Գրական համալսարան (պոեզիա, արձակ և թարգմանություններ, ժողովածուում բանաստեղծություններ ունի նաև Անահիտ Թարյանը): Եր., «Երևանի պետական համալսարան» հրատ., 1981, 182 էջ, տպ.՝ 1000:

5. Ամաշկոտ շնիկը (բանաստեղծություններ): Եր., «Հայաստանի բաց համալսարան» հրատ., 1997, 40 էջ, տպ.՝ 3000:
6. Իմ լավ դպրոց (բանաստեղծություններ): Եր., «Վան Արյան» հրատ., 2001, 40 էջ, տպ.՝ 3000:
7. Հավասոռ հանգանակ (բանաստեղծություններ): Եր., «Միշտ ներկա» հրատ., 2003, 184 էջ, տպ.՝ 500:
8. Սիրում եմ քեզ, մանկապարտեզ (բանաստեղծություններ): Եր., «Ուսկան Երևանցի» հրատ., 2004, 48 էջ, տպ.՝ 3000:
9. Զոն հայոց լեզվին (բանաստեղծություններ, նվիրված է հայոց լեզվի 1600-ամյակին, ժողովածուում գործ ունի նաև Ա. Թարյանը): Եր., ՀԳՄ հրատ., 2006, 160 էջ, տպ.՝ 1500:
10. Հեքիաթ իսկական Կարուչկարի մասին (բանաստեղծություններ, չափածո հեքիաթներ): Եր., «Լուսակն» հրատ., 2007, 122 էջ, տպ.՝ 500:
11. Արդի հայ քնարերգություն, Հայաստան-Արցախ, Ա (բանաստեղծություններ, ժողովածուում գործեր ունի նաև Ա. Թարյանը): Եր., ՀԳՄ հրատ., 2008, 520 էջ, տպ.՝ 1000:
12. Մանկական երգերի ժողովածու (Լիլիթ Համբարձումյան, Կապոյտ հեքիաթ, երգերի մի մասը՝ Անահիտ Թարյանի տեքստերով): Եր., «ԷղիքՊրինտ» հրատ., 2010, 80 էջ, տպ.՝ 500:
13. Դափնեպսակ Չարենցին (բանաստեղծություններ, ժողովածուում գործ ունի նաև Ա. Թարյանը): Եր., ՀԳՄ հրատ., 2011, 108 էջ, տպ.՝ 500:
14. Արևային աստղաբափ (բանաստեղծություններ): Եր., «Անտարես» հրատ., 2012, 240 էջ, տպ.՝ 500:
15. Հրեշն ու էշը (բանաստեղծություններ): Եր., «Անտարես» հրատ., 2012, 48 էջ, տպ.՝ 1000:
16. Այ քեզ գրավատո՞ւն (չափածո հեքիաթ): Եր., «Անտարես» հրատ., 2013, 28 էջ, տպ.՝ 2000:
17. Զմոան երգը (բանաստեղծություններ): Եր., «Լուսակն» հրատ., 2014, 44 էջ, տպ.՝ 1500:
18. Հարյուր ձերմակ վարդ՝ սիրո և հիշատակի խոնարհումով (բանաստեղծություններ): Եր., «Անտարես» հրատ., 2015, 120 էջ, տպ.՝ 3000:
19. Ուրախության դասագիրք (արձակ և չափածո երգիծանք, ժողովածուում գործեր ունի նաև Ա. Թարյանը): Եր., «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ» հրատ., 2015, 232 էջ, տպ.՝ 300:
20. Անմիտ ծիսն ու իր ծի վի-ծի վը... (ուկրաինական գրույց): Եր., «Լուսակն» հրատ., 2016, 24 էջ, տպ.՝ 2000:

21. Ես քո զինվորն եմ, Հայաստան (բանաստեղծություններ): Եր., «Անտարես» հրատ., 2017, 84 էջ, տպ.՝ 3000:
22. «Գիտնական» իշուկը (բանաստեղծություններ): Եր., «Ծիծեռնակ» հրատ., 2017, 48 էջ, տպ.՝ 2000:
23. Թթենին (բանաստեղծություններ, չափածո փոխադրություններ): Եր., «Ծիծեռնակ» հրատ., 2019, 74 էջ, տպ.՝ 2000:
24. Ատամնահատիկ, ատամնահատիկ... (պոեմ): Եր., «Անտարես» հրատ., 2020, 40 էջ, տպ.՝ 2000:
25. Ես և հայոց այրութենք (բանաստեղծությունների շարք): Եր., «Լուսակն» հրատ., 2020, 52 էջ, տպ.՝ 2000:
26. Սև շրջան (բանաստեղծություններ): Եր., «Լուսակն» հրատ., 2021, 128 էջ, տպ.՝ 3000:
27. Մատյան սիրո (բանաստեղծություններ): Եր., «Լուսակն» հրատ., 2022, 300 էջ, տպ.՝ 3000:
28. Կոսա-ակտրիսա (բանաստեղծություններ, ոուսերեն թարգմանությունը՝ Ալբերտ Նալբանդյանի): Եր., «Լուսակն» հրատ., 2022, 32 էջ, տպ.՝ 2000:
29. Ես եմ հիմա... (ժամանակակից հայ գրողները Չարենցին՝ նվիրված պոետի ծննդյան 125-ամյակին, պոեզիա, արձակ, գրականագիտություն, խոհագրություն: Ժողովածուում բանաստեղծություն ունի նաև Ա. Թարյանը): Եր., «Վան Արյան» հրատ., 2022, 208 էջ:
30. Օդապարիկ արևը (պոեզիա և արձակ, ժամանակակից հայ մանկագիրների սույն անթոլոգիայում բանաստեղծություններ ունի նաև Ա. Թարյանը): Եր., «Վան Արյան» հրատ., 2022, 160 էջ:
31. Արտազիր (արդի հայ պոեզիա, ՀԳՄ անդամ գրողների բանաստեղծությունները: Ժողովածուում գործեր ունի նաև Ա. Թարյանը): Եր., «Արմավ» հրատ., 2022, 236 էջ:
32. Պապ ու տատի թռոնները (պոեզիա և արձակ, Հայաստանի ու Արցախի հայ մանկագիրների սույն ժողովածուում բանաստեղծություններ ունի նաև Ա. Թարյանը): Եր., «Վան Արյան» հրատ., 2022, 148 էջ:
33. Детская литература. Серия "Современная литература стран СНГ" (ժամանակակից հայ մանկագիրների սույն ժողովածուում բանաստեղծություններ ունի նաև Ա. Թարյանը): Մոսկվա, ОГИ հրատ., 2022, 960 էջ, տպ.՝ 2400:
34. Զութակահար ծղրիդը (բանաստեղծություններ): Եր., «Լուսակն» հրատ., 2023, 52 էջ, տպ.՝ 2000:

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խաղաղ Դոնի բանաստեղծներ (մի մասը թարգմանել է Ա. Թարյանը): Եր., «Սովետական գրող» հրատ., 1983, 140 էջ, տպ.՝ 3000:
2. Մահթումկովի-Ֆրազի, Հատընտիր (մի մասը թարգմանել է Ա. Թարյանը): Եր., «Սովետական գրող» հրատ., 1983, 104 էջ, տպ.՝ 3000:
3. Ալեքսանդր Պուշկին, Ընտիր երկեր («Խուս դասականների գրադարան» մատենաշարով, մի մասը թարգմանել է Ա. Թարյանը): Եր., «Սովետական գրող» հրատ., 1985, 568 էջ, տպ.՝ 50.000:
4. Սամել Վուրդուն, Սեր և ներշնչանք (մի մասը թարգմանել է Ա. Թարյանը): Եր., «Սովետական գրող» հրատ., 1986, 340 էջ, տպ.՝ 5000:
5. Շոթա Նիշնիանիձե, Դիմակների մնջախաղ (մի մասը թարգմանել է Ա. Թարյանը): Եր., «Խորհրդային գրող» հրատ., 1989, 108 էջ, տպ.՝ 3000:
6. Վրաց երկինք («Համաշխարհային գրականություն պատանիների համար» մատենաշարով, մի մասը թարգմանել է Ա. Թարյանը): Եր., «Արևիկ» հրատ., 1990, 768 էջ, տպ.՝ 10.000:
7. Պեյո Յավորով, Ամպիովանու հետքերով (մի մասը թարգմանել է Ա. Թարյանը): Եր., «Նախրի» հրատ., 1992, 160 էջ, տպ.՝ 3000:
8. Պեյո Յավորով, Բանաստեղծություններ. Վիտոշայի փեշերին, արձակ էջեր. Խուշեր Յավորովի մասին (մի մասը թարգմանել է Ա. Թարյանը): Եր., «Նախրի» հրատ., 2009:
9. Եղոպասի և Լաֆոնտենի առակները (գիրք-թատրոն՝ հիանալի տարածապատկերներով, գրեթե ամբողջությամբ՝ Ա. Թարյանի չափած փոխադրությամբ): Եր., «Անտարես» հրատ., 2017:
10. Ում ձագուկն է, ում տնակն է (խոսող գիրք՝ կենդանիների ու թռչունների ձայներ, Ա. Թարյանի թարգմանությամբ): Եր., «Անտարես» հրատ., 2019: Մարյանա Սավկա, Ծեր Առյուծի հերիաթը (Ա. Թարյանի թարգմանությամբ), Եր., «Անտարես» հրատ., 2022, 40 էջ, տպ.՝ 650:

ԱՆԱՀԻՏ ԹԱՐՅԱՆ

ԵՎՎ ՇՐՋԱՆ

Բանաստեղծություններ

2021

«Սև շրջան» խորագիրն է կրում անվանի բանաստեղծութիւն Անահիտ Թարյանի այս նոր գիրքը, քանզի նրանում գետեղված բանաստեղծությունները, լինելով մեր հեղիեղուկ ու վիճահարուց ժամանակների, մեր դաժան և հաճախ անմարդկային իրականության, մեր ժողովրդի գոյապայքարի, ազգային խնդիրների՝ նոր հայեցակետից դիտարկման ու նորովի բացահայտման խփախումի գեղարվեստական ազնիվ ու ճշմարիտ արտացոլումը, ակամա ստեղծում են յուրահատուկ սև շրջանի զգացողություն, սև շրջան, որին, սակայն, անպայման հաջորդելու է մեր կյանքի լուսաբացի, մեր երկրի և ժողովրդի զարթոնքի ու վերելքի սպիտակ, ասել է, թե լուսավոր և լավատեսորեն պայծառ շրջանը... Բանաստեղծութիւնն ինգորվ զգում և անվիատ հավաստում է զայիք սպիտակ շրջանի լինելությանը, իսկ այդ հավատը պայծառ է, լուսավոր և վարակիչ...

## ՀԱՅԱՍՏԱՆ

Իմ հոգու հունդերն ազնիվ  
Սուրբ հողիդ պահ տամ, Հայաստա՞ն,  
Վեր ճախրեմ որպես արծիվ,  
Քեզ հաստատ զահ տամ, Հայաստա՞ն....  
Ոստիսիդ աչքը հանեմ,  
Սև մահվան ահ տամ, Հայաստա՞ն,  
Քո սեր պատան անեմ  
Եվ նրան մահ տամ, Հայաստա՞ն:

ԱՆՑՆՈՒՄ ԵՆ ՕՐԵՐԸ  
Անցնում են օրերը,  
Գալիս են նորերը,  
Բայց ոչինչ չի փոխվում իմ շուրջը.  
Խոնջանքս տեղում է,  
Թախիծս նեղում է,  
Չեն ջոկվում, ա՞յս, կատակն ու լուրջը:

Բոլորը խոսում են,  
Բառերը հոսում են,  
Չի լցվում դանայան տակառը,  
Եռում են մտքերը,  
Գոռում են կրքերը,  
Ժամանակն ի՞նչ բարդ է ու խառը...

Ո՞ւր է այն հավատը,  
Որ ծակի խուլ պատը  
Սրտի դեմ, խղճի դեմ բարձրացած,  
Քնե՞լ են հողմերը.  
Թո՞ դ զան մեր կողմերը  
Ցրեն այս կեղծիքը թանձրացած...

Եվ սուտը համառ է,  
Ասես, իր համար է  
Ժամանակն ստեղծել պարարտ հոդ,  
Անզոր է տաղանդը,  
Ծեծում է իր սանդը  
Եվ հեզում ներկան ուժ, դիրք ու փող...

Սգում է իմ սիրտը...  
Ա իս, ուժեղն ու բիրտը  
Վարում են մեր կյանքի սայլը հին.  
Կանգառը որտե՞ղ է...  
Եվ չափը, որ դեղ է,  
Այլևս ոչ մի տեղ չունի զին...

Խեղճ ազնիվն ի՞նչ անի.  
Ո՞չ այն է՝ ձայն հանի,  
Ո՞չ այն է՝ իր տեղը նստի լուռ...  
Դառն է, ա իս, այս դարը,  
Օրենքի չոր տառը.  
Որտեղի ց կրացվի հույսի դուռ...

Վառվում են սրտերը.  
Որոտից զրվելը  
Չի մաքրում թուխապերը շանթերից.  
Արդեն այս ու այնտեղ  
Հրդեհ է ու հեղեղ,  
Երկիրն է դդրդում զանգերից...

Մեծ է այս ալիքը.  
Ներկան ու զալիքը  
Բախվում են ցուլերի նման զույգ...

Եվ դարն ալեծուի է,  
Աստծո ունկը խուի է,  
Աշխարհն է ձռձվում ոնց հին մակույկ...

Վեճ է լույս ու մութի...  
Վերջն է բիրտ ու բութի.  
Այզն է մոտ. արևն է նվերը...  
Հպարտ եմ ես մարդով,  
Եվ հոգիս հավատով  
Բացում է իր ծալած թևերը...

ԴԱՇԻՍ ՄԵՂԱՎՈՐ  
Դա՝ իմ մեղսավոր,  
Դու աներաշխիք խոստո՞ւմ այն լավի,  
Բարու, ազնիվի ու կատարյալի,  
Որ անգոյության քառսից անդեմ  
Լինելության է կոչվելու մի օր  
Գալիքի սրտի համաշափ զարկով  
Ու կանչով արյան...  
Այս ի՞նչ ես արել.  
Մարդիկ, այս մարդիկ այս ի՞նչ են դառել...  
Ինչքա՞ն փոխվել են, դարձել փոքրողի,  
Մի բոռ սրտի մեջ՝ մի ծո վ դավ ու քեն,  
Այսքա՞ն մտքի մեջ՝ այսքա՞ն սրտի սով,  
Այսքա՞ն մարդու մեջ՝ մարդու սուլ կարիք  
Ու կարո՞ւ այսքան...  
Այս ի՞նչ ես արել.  
Դու չես խնայել, ախր, ոչ ոքի.  
Հոգիների մեջ որոմ ես ցանել,  
Պատվաստել նրանց ծլունակ շարիք,  
Որ սմբեցրել են սիրտը մարդկային,  
Հոգին մարդկային, միտքը մարդկային,  
Ճղճիմացրել են,  
Փոքրացրել այնքա՞ն,  
Որ մարդիկ խղճուկ կպել են հողին,  
Գետնաքարշ կյանքի քուրձերն իրենց հին  
Քո՞ իսկ աչքի դեմ

Հանել են, փոել արևին ի տես  
Եվ իրենց հոգու մերկությունը խեղձ  
Աշխարհին բացել...  
Ինչքա՞ն, ինչքա՞ն են մարդիկ մանրացել...

Դա՞ք իմ մեղսավոր,  
Ես՝ կյանքում շիտակ քայլելու սովոր  
Մարդ արարածու, ախր, ի՞նչ անեմ.  
Ոտքերս, ասա՞ւ, ես ինչպէ՞ս դնեմ...

ԵՐԿԻ՛Ր ԻՍ  
Երկի՞ք իմ' իմ սո՞ւրբ ծնող,  
Առանց մի ծպտուն հանելու՝  
Պատրաստ եմ դառնալ ես հոդ՝  
Իմ սրտում քեզ հաց ցանելու,  
Քո կյանքի, բախտի համար՝  
Զօր-զիշեր անխոնջ բանելու,  
Ցավերը քո անհամար  
Առնելու, ի բաց վանելու..  
Պատրաստ եմ լույսը փառքիդ  
Աշխարհից աշխարհ տանելու,  
Երակս կապած երակիդ՝  
Արյունս կաթ-կաթ քամելու...  
Հավատա՝ պատրաստ եմ ես  
Քո խաչին ինձ իսկ զամելու...  
Միայն թե դու միշտ ապրես.  
Առանց քեզ ի՞նչ եմ անելու...

ԶԱՏԻ՛Ր ԻՇԱՌԻՑ  
Եվ ի՞նչն է սնում չարի արմատը...  
Որտեղի՞ց նրան այսքան թույն ու մաղձ,  
Այսքան դառնություն, ոգու այսքան քաղց...

Չե՛, խառն է... սակայն, արդյոք, ո՞ւմ մատը,  
Որ ծնվում է միշտ չարը, սունկի պես,  
Մեր կյանքի բնին՝ բոլորից անտես...

Ծծում է անհագ կենսավիշը մեր,  
Խժոռում մեր հոգին, նյարդերը բոլոր,  
Մեր հյութո՞վ ապրում, արյա մբ՝ ամեն օր...

Եվ օրը-օրին դառնում ենք մենք կեր՝  
Մի համե՞ն դ ակուտ, մի անո՞ւ չ պատառ,  
Չարին անկշտում, չարին անպատկառ...

Ի՞նչ է ստացվում... ե՛կ ու մի՛ ցնդիր.  
Այդ մե՞նք ենք սնում չարի արմատը,  
Մե՞նք ենք հանցավորն ու մե՞նք վատը...

Օ՛, մա՛յր բնություն, իրենց տե՛ղը դիր  
Դու լավն ու վատը, կյանքում ամե՞ն ինչ...  
Եվ չարն ու բարին զատի թ իրարից...

«ԹԱՎՇՅԱ» ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
Քայլելով ընկան ճամփա,  
Բոլոր ճամփեքը փակեցին,  
Քաղաքը դարձրին ճամբար.  
Մարդիկ վախեցած տափեցին...  
Ճառեցին զօր ու զիշեր,  
Ինչքան ն թույն ու մաղձ թափեցին,  
Ցինեցին լպրծուն սեր,  
Դույլ ու կաթսայով ծափեցին...  
Մերժեցին, առաջ անցան,  
Միմյանց հավատն իսկ չափեցին,  
Ծեր-ջահել մի մարդ դարձան,  
Արքունիք և զահ ճանկեցին...  
Վեր ելան քափ ու փրփուր,  
Մի-մի չադ պաշտոն չանթեցին,  
Ժողովուրդն ո՞վ է՝ մի կույր,  
Երկիր ու զալիք լափեցին...  
Աշխարհի վերջն է, ասես,  
Մեր կենաց ծառը հատեցին,  
Լույս օրով, Աստծուն ի տես,

Մեզ, ավա՞ն, դարձյալ խաբեցին...

### ԿՈՒԶԵՍ՝ ՊԱՅԹԻՐ

Կուզես՝ գոռա, կուզես՝ պայթիր.  
Խառնվել են չորն ու թացը,  
Սատանա է թեկուզ պայտիր  
Դու և ես ու քո ցամաք հացը...  
Շուր է եկել աշխարհն ամրող.  
Նախ վերացրու հենց քո՝ բացը,  
Ողջը՝ մեռած, մեռածն է ողջ.  
Չի կտրվում Աստծո լացը...

### Ի՞ՆՉ ՓՈՒՅԹ...

Թե ունես ամուր ոտքեր,  
Կհասնես բարձր պաշտոնի,  
Քայլե՞լ ես՝ վայեկի ր, կե՞ր...  
Հաստա՝ տ չես մնա անոթի...  
Գլուխն ի՞նչ... հիմա արդեն  
Ոտքեր ին են հարգի. դու դոփիրր...  
Ոտքերդ ճամփադ հարթեն՝  
Դու ապրի՞ր առանց ամոթի...  
Նազարի բախտն ես գտել,  
Այն քեզ ամեն ինչ կարտոնի...  
Գահին ես, երկրին ես տեր.  
Ի՞նչ փույթ՝ նժո՞ւզ ես, թե՝ պոնի...

### Է՛Լ Ի՞ՆՉ ԵՐԴՈՒՄ

Մեծը փոքր է, փոքրը՝ մեծ.  
Իր տեղում չէ և ոչ մեկը,  
Հինն ի նշ արագ մոռացվեց.  
Վիճարկվում է երկրի դեկը...  
Ոչն այն է, այն՝ ոչ.  
Մարդն է նկուն՝ հանց եղեզը,  
Է՛լ ի նշ երդում բարձրագոչ.  
Թանձրանում է ստի մեզը...

## ՊԻՏԻ ԼԻՆԵՍ

Է՞ հ, ի՞նչ արած, մարդկանց համար  
Մշտապես նոր պիտի լինեմ,  
Ուզեմ-չուզեմ՝ ձմեռ-ամառ  
Հանգստի ձոր պիտի լինեմ...  
Եվ, որպեսզի շճահճանամ,  
Վճիռ ու խոր պիտի լինեմ,  
Հոգուս լացը զայել ջանամ՝  
Գեղգեղող լոր պիտի լինեմ...  
Իմ սևը՝ ներս, ճերմակը՝ դուրս.  
Արևոտ օր պիտի լինեմ,  
Ինչքան ն ասես՝ մերկացած ուս.  
Ծաղկավառ շոր պիտի լինեմ,  
Կապն իր կտրած դարիս համար  
Հզոր շեփոր պիտի լինեմ.  
Երկրիս բախտի համար անմար  
Հազար կտոր պիտի լինեմ...

## ԱՅՍ ՀՈՂԸ

Այս հողը ծնել է ինձ.  
Արյամբ եմ նրան ես կապված,  
Իր կյանքով սնել է ինձ.  
Նրա լուսով եմ ես պատված...  
Ա ին, Աստված մի՛ արասցե.  
Որ մի օր լինեմ ես խարված...  
Չե՛ մ չվի ես անհասցե.  
Չե՛ մ լրի մայր հողն իմ ապրած...

## ՇԱ՛Տ ԷԼ ԹԵ...

Զատվում է մութը լուսից՝  
Արտույտի զվարթ դայլայլով...  
Ամուր եմ կառչած հուսից.  
Կյանքն իմն է՝ խինդ ու մռայլով...  
Շա՛տ էլ թե դարն այսօր էլ

Առաջ է գնում հին սայլով.

Կարծում է, թե հզոր է

Մարդ-ոչխարով ու մարդ-քայլով...

### ԿԵՍԸ

Ամենուր՝ ձայնե՛ք-ձայնե՛ք.

Կեսն աղմուկ է ու կեսը՝ երգ,

Ամենուր՝ քայլե՛ք-քայլե՛ք.

Կեսն առաջ է ու կեսը՝ հետ...

Ամենուր՝ դաշտե՛ք-դաշտե՛ք.

Կեսը՝ խոպան ու կեսը՝ հերկ,

Ամենուր՝ փաստե՛ք-փաստե՛ք.

Կեսը՝ կոծկած ու կեսը՝ մերկ...

Ամենուր՝ մտքե՛ք-մտքե՛ք.

Կեսը՝ կոծոծ ու կեսը՝ բերք,

Ամենուր՝ սրտե՛ք-սրտե՛ք.

Կեսը սեր է ու կեսը՝ վերք...

### Է՛Լ ԲԱՎ Է

Հոգնել եմ, Աստված վկա,

Սարդակերպ և բութ գեժերից,

Աղջկան լավ-վատ չկա,

Բայց թո՞ղ ու փախիք գեշերից...

Աղարտվեց, ե՛լ ի՞նչ մնաց

Մեր ավանդական ծեսերից,

Իմ կյանքը խոտոր գնաց.

Խոռով եմ ես իմ կեսերից...

Երկիք իմ, որքան կախվենք

Օտարի զոռող փեշերից,

Է՛լ բավ է, շա՞տ կուշտ ենք մենք

Սին խոստումների լեշերից...

### ՍԵՎ ՇՐՋԱՆ

Գնալով՝ լույսը բացվում,

Երկնքի սեր չքվում է,

Արևն իր շողքը դաջում,  
Ինձ լույս մատներով հպվում ե...  
Ու որ էր, թե մի լույս բացվեր  
Իմ երկրում. ցավից ձկվում է.  
Տարաբախտ երկրիս կյանքի  
Սև շրջանն, ավա դ, ձգվում է...

ԴԻՄԱՑԻՇ  
Համբերի թ, լուանում է.  
Լույսի հետ զափս է հույսը,  
Է՞ հ, հույսն է, որ պահում է  
Հոգու մեջ հավատն ու լույսը...  
Դիմացի թ, դարձ բարդ է.  
Հարգի չեն արդ սերն ու հույզը...  
Խփշտի թ դու, որ մարդ ես,  
Ճշտի և ստի այս խյուսը...

ԴՈՒ Ի՞ՆՉ ՄԱՐԴ ԵՍ  
Մա թդ, ախր, դու ի՞նչ մարդ ես.  
Մածունին սե ես դու ասում,  
Պարզունակ, նաև բարդ ես.  
Գիտունին ինև ես դու ասում...  
Խեղում ես կյանքդ խրթին.  
Աստրծուն դե ես դու ասում,  
Քար զցում բախսիդ զլիվին.  
Նեղին բարև ես դու ասում...

ՍԵՎ ՆԵՌԸ  
Աճպարար խենթն այս գոռող  
Դարձել է երկրի նոր տերը,  
Քայլում է խորոգ-խորոգ  
Կարձելով՝ դա՝ է իր դերը...  
Ճշում է, ճամարտակում,  
Ծանրացնում երկրի հին բեռը,  
Մեղքերն է իր պարտակում,

Սրում է ստի իր կեռը...  
Երկիրն է մատնել սովի.  
Հոգ չէ՝ առա տ է իր կերք,  
Աշխարհն էլ թո դ նզովի  
Նա նոյնն է՝ թուրքի ընկերը...  
Մերօրյա Սիզիֆն այս նոր  
Չի հաղթահարում իր լեռը...  
Երկիրն է սզի մեջ խոր.  
Այստեղ իշխում է սև նեռը...

### Ի՞ՆՉ ՄԱՐԴ

Սա՞ է իսկական մարդը,  
Սա մի՞թե մարդն է ճշմարիտ.  
Այս պարզունակն ու բա՞րդը,  
Սա, որ փորձանք է և չարիք...  
Սա Աստծո արարա՞ծն է՝  
Աստծո ձեռակե՞րտն անտարիք.  
Դրախտից վտարվա՞ծն է,  
Որ չունի ներկա ու գալիք...  
Չարին է մարդը ծախել  
Իր հոգին՝ որպես խաղալիք...  
Աստծո հետ չունի արդեն  
Է՛լ ո՛չ առնելիք, ո՛չ տալիք...

### ԱՄՈՌ Է

Երկրումս չկա արև,  
Օրերը ցուրտ ու քամոտ են,  
Հիվանդ լույս, մտքեր անթեն,  
Կործանման շավիդն արդ մոտ է...  
Ամենուր՝ խոսք ու քարոզ,  
Ճառերը անհամ, անհոտ են,  
Չկա փրկության փարոս.  
Մեր հոգին պայթող անոթ է...  
Այսքան էլ նահա՞նջ, անկո՞ւմ...  
Երկինքը հայց ամպոտ է.  
Ի՞նչ են մեր զլիսին սարքում,

Ե՞րբ խելքի կզան, ամո՞թ է ...

## ԹԱԳ ԵՎ ՎԱՐՄԿ

Քաղաքական այս վարակը

Տարածվել է ամենուրեք.

Բռնել է մեր տունն ու բակը,

Վարակվել են արու և էզ...

Բարբաջում են մեծից փոքր,

Դուրս են տալիս՝ ինչ կարող են.

Պայթեցնելով կոկորդ, թոքեր՝

Գոռում են, որ լավ քայլող են...

Համոզված են՝ ժամն է իրենց.

Պիտի քայլեն ցուրտ ու տապին,

Մերժում են իինն ու փոքրից մեծ,

Իրենց հորն իսկ, ապուպապին...

Խոլ աղմուկ է, զաղջ է օդը.

Անհնար է շնչել ազատ,

Կորսվել է խիղճ-ամորթը,

Բարին քիչ է, իսկ շարը շատ...

Հաց ու ջուր է դարձել սուսոր,

Իսկ կեղծիքը՝ կյանքի օրենք,

Գահակալ են բիրտն ու բութը...

Եվ այս ձանձում ապրում ենք մենք...

Այսպես որքա՞ն կդիմանանք,

Ուր կիասնենք մեռյալ կետից,

Ինչքա՞ն արյուն դեռ պիտի տանք,

Դուրս կզա՞նք մենք Ստիքս գետից...

Քայլելո՞վ են երկիր պահում,

Գլուխն արդեն պետք չի՝ զալիս...

Ճանապարհն այդ շատ է սահուն,

Իսկ բեղ-մորուքն ի՞նչ է տալիս...

Քաղաքական վարակին այսօր  
Դարձել է թունդ թագավարակ...  
Է՞ հ, ժամանակն ամենազոր  
Դեռ կմանի հաստ ու բարակ...

Դեռ կասի իր ոչն ու այոն,  
Դեռ կզատի մութը լույսից...  
Մեր երկրում էլ կիխի տոն,  
Եվ վախերն իմ կլքեն ինձ...

Հիմա ի՞նչ կա՝ թագ և վարակ,  
Կործանում են երկուսն էլ մեզ.  
Ո՞րն է որից գործում արագ  
Աշխարհին ու Աստծուն ի տես...

ԱՐԴՅՈՔ, ՈՒՆԻ ՎԵՐՋ  
Անցնում է օրը, անցնում է տարին,  
Ճնի հետքերով գալիս է նորը.  
Նոր քար չի դրվում դրված հին քարին,  
Մեղոն՝ անտեսված, հարզի է բոռը...

Ովքեր քայլել են, կատարել մի քայլ,  
Առատ հունձք ունեն, կյանքն են վայելում,  
Ազնիվ ոսկի՝ ես՝ կդարձնեն անփայլ,  
Մա՞րդ ես՝ գայլի պես քեզ կուտեն հում-հում...

Սև-սպիտակի բաժանել մարդկանց,  
Ոճիր են գործում ձեռնոցով ձերմակ...  
Կյանքի սև-սպիտակ շերտերն են անանց.  
Մեր սև շրջանն այս մնում է դեռ փակ...

Եվ դեգերում ենք սև շրջանի մեջ,  
Խարխափում անլուս հույսի զնդանում.  
Մեր այս սև շրջանն, արդյոք, ունի՝ վերջ,  
Մեր տկար հավատն ուր է մեզ տանում...

## ՄԻՒՉԵՎ Ո՞ՒՐ

Երկրիս օրերն այնքա՞ն գորշ են,  
Այնքա՞ն հեղձուկ, անհամ, անհոտ...  
Կյանքն իմ երկրում խոլ քառ է,  
Բաբելոնյան խառնաշփոթ...

Խճռովել են լեզուները՝  
Սարդկային ու անմարդկային...  
Շա տ-շա տ են մարդ-գեռունները.  
Հիմա նեռն է բազմել զահին...

Խոտորվել է ժամանակը,  
Ազատ խոսքն է դրվել վանդակ...  
Չիմացա՞ն մեր գենի հարզը.  
Կյանքն անլուս է, բախտը՝ խանդակ...

Քայլում ենք մենք, բայց մինչև ո՞ւր...  
Կմնա՞նք մենք կյանքի թամբին,  
Էղիպտի պես թշվառ ու կույր  
Որքա՞ն քարշ գանք բախտի ձամփին...

## ՉԱՐ ՈԳԻ

Ոչ ոքի չես հավանում,  
Քեզանից բացի ոչ ոքի...  
Բարի ես քեզ համարում,  
Վարդում ես, սական, անհոգի...  
Չես ջոկում չորն ու թացը,  
Եռում ես, վառում՝ հանց շոգի...  
Չի ուտվի հոգեհացդ.  
Ավա՞դ, դարձել ես չար ոգի...

## ԷՌ ԵՐԿԻՐ ՉԵ

Երկիրս էլ երկիր չէ.  
Իշխանավորն է բժացել,  
Օրենքի զիրը զիր չէ.

Գութն ու բարին են քշացել...  
Իրար են ուսում հում-հում.  
Աստծո երկյուղն է չքացել...  
Իմ ցաված սիրտն է ողբում.  
Աշխարհն ու մարդն են փշացել...

ՀԵՅ, ԱՇԽԱՌՈՒՆ...  
Հեյ յ, աշխա՛րհ, այս ո՞ւր դու հասար...  
Ծովել է, փոխվել ամեն ինչ.  
Հիմա ո՞չ սարն է, իրա վ, սար,  
Ո՞չ էլ սրտերն են մաքրաջինջ...

Հիմա զին չունի երդումը,  
Խոսքերն էլ սին են ու դատարկ,  
Չորեղը թույլին քերթում է,  
Ունենք ծակ տանիք, փուտ հատակ...

Ավագակն ազատ շրջում է,  
Կալանքի տակ է արդարը,  
Հայ մարդն այս երկրում մրջյուն է.  
Բայց նա է կերտում այս դարը...

Իսկ երբ փորում են ոտքի տակ  
Եվ հողը ծախում մաս առ մաս,  
Ողջ ազգն է դառնում կուտ բանակ,  
Դաս տալիս... բայց չի առնում դաս...

Հեյ յ, աշխա՛րհ, այս ո՞ւր դու հասար.  
Ծովել է, փոխվել ամեն ինչ...  
Ես նո՞ւնն եմ... չե՞, չեմ բռնի զառ.  
Շատն իրենց լինի, իսկ քիչն՝ ինձ...

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՐԵՄԵՐԿ  
Պրոֆեսոր ԱՐՄԵՆ ՉԱՐՉՅԱՆԻ  
Կանգնած է ամբոխի դեմ  
Ճշմարտությունը մորեմերկ.

Չքնա՞ղ է՝ որպես եղեմ,  
Բայց սրտում ցավ է, անբույժ վերք...  
Մարուր է ինչպես լույսը.  
Ո՛չ շպար ունի, ո՛չ էլ ներկ,  
Հավատն է նրա հույսը,  
Այն կյանքի հերկ է, վաղվա բերք...  
Թեծ կրվում լույս ու մութի  
Հաղթական գենք է, կենաց երգ...  
Չի խարվի ոսկե կուտին  
Ճշմարտությունը մորեմերկ...

### ՉԻ ՎԵՐՋԱՆՈՒՄ

Մեր կյանքն իր այս սև շրջանում՝  
Թառափի սև ձուղպահատիկ.  
Նրա սաղմն է այնտեղ շնչում,  
Տրոփում է սրտի պիրկ...

Եթե նրա բախտը բերի,  
Հասունանա կամաց-կամաց,  
Չի վերածվի ոմանց կերի,  
Դուրս կլողա, կելնի ի բաց...

Մեր կյանքն, արդյոք, կյանք կդառնա՝,  
Դուրս կգա՝ այս սև շրջանից,  
Քիչ-քիչ երկի՞նք կհամբառնա,  
Դուրս կպրծնի՝ մահվան ճանկից...

Սև շրջանից երբ դուրս պրծնի,  
Մուտք կգործի ձերմակ շրջան.  
Լույսերի մեջ, հո՛, չի՝ հրձվի  
Եվ կժպտա՝ որպես մարջան...

Մեր կյանքն իր այս սև շրջանում՝  
Թառափի սև ձուղպահատիկ.  
Այս շրջանն էլ չի վերջանում,  
Տանջում է մեզ բյուրապատիկ...

## ԵՂԵԳԻ ՆՄԱՆ

Եղեգի նման ձկվեմ,  
Բայց չկոտրվեմ այս կյանքում,  
Հողմները զան ու չըլեն,  
Ես մնամ անկոր, միշտ կանգուն...  
Սրնգեմ եղեգի պես,  
Խաղաղվեն հոգիներն անքուն,  
Հանց եղեգ՝ լինեմ միշտ հեզ,  
Որպես մարդ՝ չունենամ անկում...

## ... ՈՒ ԱՆՑԻՇ

Թե ճամփիդ ելնի մեծ զետ՝  
Ճամարձակ մտի՞ր ու անցի՞ր,  
Ճիմա՞րն է վիճում քեզ հետ.  
Վերջակետ դու դի՞ր ու անցի՞ր...  
Դու չարին հոգիդ մի՞քաց.  
Ճամփադ շուտ թերի ու անցի՞ր...  
Երբ մա՞րդն է անաղուհաց՝  
Դու միայն թքի՞ր ու անցի՞ր...

## ՔԻՉ ՄՆԱՑ

Դժվա՞ր է, ոչի՞նչ... ճամփադ  
Դու մի՞քող թերի, քիչ մնաց,  
Առաջ ընթացիր անպարտ,  
Մի՞դարձիր գերի, քիչ մնաց...  
Տոկա՞չ չար բախտը զլիսիդ  
Ինչ էլ որ բերի. քիչ մնաց,  
Մի՞խարվիր խոսքին հտպիտ,  
Ուկեկուտ կերին. քիչ մնաց...  
Մարդկանց հանդեպ մնա՞մարդ.  
Նրանց միշտ ների ք. քիչ մնաց,  
Կյանք է՝ մեկ լավ ու մեկ վատ,  
Քիչ էլ համբերի ք. քիչ մնաց...

ՀԱՅՏՆԻ Է

Հայտնի է՝ ազնիվ մարտում

Հաղթում է միշտ կուժեղը,

Ցորենի հասուն արտում

Իր մեծ դերն ունի և ծեղը...

Բայց հաճախ մեջտեղ գալիս,

Իր «եսն» է պնդում մժեղը,

Խառնում է, իրար տալիս

Այս կյանքի մզլած մղեղը...

ՍԱ ՄԵՐ ԿՈՒՎՆ Է

Գնո՞ւմ ենք դարձյալ... Ազգովի գնում ենք,

Գնում ենք մենք թեծ առաջնագիծ.

Մեր և՝ կյանքը, և՝ գլուխը դնում ենք՝

Պահպանելու մեր պատիվն անբիծ...

Սա մեր կորիվն է, մեր մեծ գոյամարտը,

Մեր պատերազմը Հայրենական.

Մեր արժեքներն են Հայրենիքն ու Մարդը,

Մենք՝ թշնամու դեմ պայթող ական...

Մեր թշնամին՝ ի՞նչ... վերատին նույն թուրքն է, Ցեղասպան թուրքն է արյունաբրու...

Հե՞յ, աշխա՛րհ, թուրքը ճակատիդ սև թուրքն է, Մարդկության թութքը... ո՞ւմ եք խարում...

Սա մեր կրիվն է, գնում ենք մենք նորից՝

Պաշտպանելու մեր հող-հայրենին.

Ով իր գենն ազնիվ ժառանգել է հորից,

Նա մեզ հետ է միշտ, բարձր է ոզին...

Սա նոր Սվաբայր, Սարդարապատ է նոր.

Մեր հողից ո՞ւր ենք մենք զաղթելու...

Գնում ենք կովի. մեր հավատն է հզոր,

Մենք կովելո՞ւ ենք և հաղթելո՞ւ...

## ՇԱՌՍ ԷՐ ՍՏՈՐ

Կոիվ էր՝ նենգ ու դաժան.  
Առաջին օրից խարեցին...  
Մարդկային կյանքն էր էժան.  
Ծովի չափ արյուն թափեցին...  
Սուտը՝ շատ, ձշտի սով էր.  
Մեր խելքը մի լավ չափեցին,  
Ստի դեմն առնողն ո՞վ էր.  
Քունջ ու պուճախում տափեցին...  
Մեր տղերքն առյուծախրտ  
Թուրքին շան նման թակեցին,  
Աշխարհում «քաղաքակիրթ»  
Ելան և թուրքին ծափեցին...  
Հաղթո՞ն է պարտվողն այսօր.  
Մեր բախտի ճամփան փակեցին...  
Աշխարհը շա տ էր ստոր.  
Աչք փակեց, և մեզ լափեցին...

## ԻՄ ՏԵՂՆ ԱՅՆՏԵՂ Է

Առաջնազգում տեղս դատարկ է.  
Բա՞ , որ թշնամին նկատի՞ հանկարծ...  
Այս միտքը հոգիս պայթեցնող արկ է,  
Որտեղ դեռ շատ կան մոխիրներ հանգած...

Տեղս դատարկ է առաջնազգում.  
Ճի՞շտ է՝ այնտեղ են մեր զինվորները,  
Բայց պակասում է այդ պիրկ բողոքում  
Մեկը մատներից. չի կրում բեռը...

Այդ ես եմ, ավա՞ղ, պակասող մատը,  
Որը միայնակ անզոր է ու խեղճ,  
Առանց ինձ մերոնք չեն շահի մարտը,  
Եվ պատերազմը կերկարի մեր մեջ...

Առանց ինձ հաղթող բողոքը չենք դառնա  
Եվ չենք պահի մեր առաջնազիծը,  
Մենք տանուլ կտանք կոհիվն այս խառնակ՝

Սևացնելով մեր պատիվն ու խիղճը...

Կոիվ եմ գնում եղբայրներիս պես,  
Ուր կյանքի-մահվան վիճակ են զցում...  
Թուրքի աչքերը հանող մատն եմ ես.  
Իմ տեղն այնտեղ է՝ առաջնազօնում...

### ՀԵՏԵՎԻՑ

Ի՞նչ լավ է՝ հեղեղն անցավ...  
Բայց ավեր թողեց հետևից,  
Թվաց, թե եղավ-պրծավ՝  
Բյուր ցավեր թողեց հետևից...  
Կործանեց պատվար ու հիմք՝  
Մուր դավեր թողեց հետևից,  
Դառնացրեց հոգի ու քիմք՝  
Աև մահեր թողեց հետևից...

### ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Կովից տուն դարձած զինվորին ջահել  
Բոնել են, տարել միտինզի վայրից.  
Եվ թե որքան են կալանված պահել,  
Որքան են տանջել՝ դեռ հայտնի չենձ...

Միայն հայտնի է՝ զինվորն այդ հերոս  
Արյամբ պահել է հայրենիք ու հող,  
Երկիրն է փրկել թուրքից բարբարոս  
Եվ չի տենչացել ո՛չ պաշտոն, ո՛չ փող...

Իսկ այսօր ոմն մի մորուքավոր  
Հարցաքննում է զինվորին մեր քաջ.  
- Իմացի՞ թ, ջահե՞ լ, չես տեսնի լավ օր,  
Եթե չբացես հոգիդ մեր առաջ...

Ի՞նչ ունես մեր դեմ... օրերին այս թեժ  
Որտե՞ն էս եղել, խոսի՞ թ, այ անբեղ...  
- Որտեղ եմ եղե՞լ հիմա կասեմ քեզ.

Առաջնագծո՞ւմ... իսկ դո՞ւ, դո՞ւ՝ որտե՞ղ...

## ՆՈՒՅՆ ՄԵՇԱԾԱԼ ԿԵՏՈՒԻՄ

Երկիրս այսօր ձերմակեց լրիվ.  
Վշտի ց էր, ցավի ց... ինչի ց էր սարսել...  
Փորձում էր սանրել մտքերը խոիվ  
Եվ այլոց եփած հին ձաշը մարսել...

Զյուն էր փաթիլվել ողջ զիշերն ի լուս,  
Հանց բամբակ դրվել մեր խոցված հողին,  
Քամին բաց վերքն էր լիզում շատ զգույշ.  
Թուրքի գեղարդը խրված էր կողին...

Արար աշխարհում երկիրս որք է.  
Չկա ոչ մի սիրտ՝ իր ցավը կիսող,  
Արդար երկիրս աշխարհին խորթ է.  
Կա մ կա, կա մ չկա... ի՞նչ է՝ մի թիգ հող...

Բայց այդ մի թիգ հողն արժե մի աշխարհ,  
Կուռ աղամանդ է՝ դարերում հղկված,  
Կենաց բնօրրան և հինգերորդ տարր,  
Աշխարհին պարզված սուրբ աղ է ու հաց...

Իսկ այսօր, ավա՞ն, հողս՝ վիրավոր,  
Երկիրս տկար և արյունաքամ...  
Հայտնվել ենք մենք փոսի մեջ այս խոր,  
Փորձում ենք որւրս զալ լարումով անկամ...

Դեռ գտնվում ենք նույն մեռյալ կետում,  
Ե՞րբ պիտի մթնում մի լուս հուրիրա...  
Աստված իր ձերմակ մորուքն է փետում  
Եվ բու տո-բու տո թափում աշխարհի վրա...

## ԻՆՉՊԵ՞Ս ԴԻՄԱՆԱՄ

Փակվել եմ մոայլ տանը.  
Աշխարհից ես ի՞նդ իմանամ...

Լավ է իմ փորձած թանը.  
Նոր մածուն, բայց թե հին աման...  
Չգտա ես մի տաք սիրտ.  
Ո մ առջև- սիրտս ես բանամ...  
Դե՛, ասեք, իւելոք մարդիկ,  
Այս կյանքին ինչպե՞ս դիմանամ...

ՔԻՉ ԱՌ ՔԻՉ  
Ի՞նչ ծանր է ապրելն այսպես.  
Կշռում ես, հաշվում քիչ առ քիչ,  
Սև սրտով ինչքա՞ն կապրես.  
Հոգիդ ես հաշմում քիչ առ քիչ...  
Շագրենի կաշվի նման  
Կուշ զալիս, քաշվում քիչ առ քիչ,  
Մանրանալ... այն էլ այդքա՞ն.  
Քո կյանքն է մաշվում քիչ առ քիչ...

ՈՒԶԱԾՍ Ի՞ՆՉ Է  
Ինձ ասե՛ք, բարի՝ մարդիկ,  
Ուզած ի՞նչ է՝ շա՞տ բան է.  
Միշտ լինել լույսի մարտիկ,  
Ասել՝ սա մածուն, սա թան է...  
Խնկարկել բարուն, լավին,  
Շա տ էլ թե այս կյանքն էժան է.  
Չտրվել չարի դավին.  
Հավատը սիրո հեսան է...

Ի՞ՆՉ ՕՐԻ ՀԱՍԱՆՔ  
Ինչ կուզես՝ արա, մե՛կ է.  
Են զիսից ծուռ է ատաղձը,  
Ատամը մանկան թեք է.  
Դու զիսին շա դ տուր աղանձը...  
Ամեն ինչ ձև է հիմա.  
Ո ՞մ են պետք հոգին ու անձը,  
Խե՛ղձ Պեզաս... անթե, է նա.

Թամբելեն, դրել պիրկ սանձը..  
Ի՞նչ օրի հասանք, Տե ք իմ,  
Աշխարհն է տիրել նախանձը...  
Տնքում է թախիծն իմ հին.  
Սրտերում շատ է սև մաղձը...

### ԽՈՍՏՈՎԱՆԻՇՐ

Շատ կուշտ ենք արդեն, եղբա՛յր,  
Քո եփած ճաշից... դու ու դատիր.  
Պաշտոնի եկար-չեկար  
Դարձար համար մեկ դավադիր...  
Ուրացար երկիր ու հող  
Հայ թուրքդ ստոր և զազիր,  
Քառս է հիմա անշող.  
Լույսն ու խավարը դու զատիր...  
Այ հայրենադավ, այ խենթ,  
Կարո՞ն էս՝ ձեռքդ խղճի՞ն դիր  
Եվ խոստովանի ը թուրքի հետ  
Այդ դո՞ւ չես կնքել դազազիր...

### ՉԱՐԻ ԶԻՆՎՈՐԾ

Չես տեսնո՞ւմ՝ ո՞ւ լր ես հասել...  
Դրանից այն կողմ տեղ չկա.  
Կաշի ես դեմքիդ քաշել,  
Թունտու ես. օձն իսկ մոտ չի զա...  
Անեծքդ չես խնայում  
Աշխարհին՝ ձայնով քո լացկան...  
Ա ի, նեռն է քեզ հմայում.  
Չարի զինվորն ես դու վարձկան...

### ՀՕԴՍ ԿՅՆՄԻ

Այնպես է կպած զահին՝  
Չես քերի նրան սուր բահով,  
Տրված իր փառքին, շահին՝  
Ապրում է տվյալ սուտ պահով...

Երկիրն իսկ ծախեց նեռն այս,  
Հանձնեց հայրենիք, նախնաց հող...  
Հանցանքի ծանր բեռն այս  
Չի մարի թեկուզ իր մահով...  
Չփիսի նեռն այս, սակայն,  
Չի կարող ապրել ապահով.  
Իր համար ի՞նքն է ական,  
Հօդս կցնդի իր գահով...

ԻՆՉՊԵ՞Ս ՊԱՏԺԵՆՔ  
Ի՞նչ անեմ ես այս հավին.  
Խալիսի դռանն է ձու ածում...  
Ի՞նչ ասեմ ես այս հային.  
Թուրքի ձեռքին է ջուր ածում...

Իր ազգն ու ցեղը թողած՝  
Ոտքերն է պաշում ոսխի,  
Պատիվն ու խիղճը թաղած՝  
Վաղուց անցել է փորսողի...

Սողում է, քծնում չարին.  
Վախի՞ց ե, թէ՞ իր բնույթից...  
Մեր բախտն է առել քարին.  
Մեռնում ենք չարի սև թույնից...

Ո՞ւր գնանք, ո՞ւմ բողոքենք,  
Ո՞ւմ առջև, բացենք մեր սիրտը,  
Այդ կացնի կոթը մե՞նք ենք.  
Մեզ տապալում է այդ բիրտը...

Չարի դեմն ինչպէ՞ս առնենք  
Եվ ինչպէ՞ս պատմենք թուրք-հային.  
Բռնում են, մորթում անխելք  
Դրսում ձու ածող բութ հավին...

ՈՉԻՆՉ ԷԼ ՉԻ՞ ԵՂԵԼ

Գիշերը պայթել է փոթորիկ.  
Քանդել է թե՝ դրյակ, թե՝ քոլիկ,  
Զարդել է, տապալել ծառ ու այուն,  
Ավերել ձանապարհ, բեկել հուն,  
Մի ամբողջ քաղաք է հեռեռել...  
Բայց, կարծես, ոչինչ էլ չի եղել...

Այս խենթն էլ մտել է ասպարեզ՝  
Այս հոգով գաճաճը թիզ ու կես,  
Ծախել է մեր երկիր-հայրենին,  
Ուրացել հավատն ու մայրենին,  
Մեր որդոց սուրբ արյունն է հեղել...  
Խնդում է՝ ոչի՞նչ էլ չի եղել...

Աշխարհը նայում է անտարբեր.  
Նրան՝ ի՞նչ... տերո՞վ ես, թե՝ անտեր...  
Ուժեղի մեջքին է կանգնում միշտ,  
Է՛ հ, թքա՞ծ սխա՞լ ես կամ թե ճիշտ,  
Պատրաստ է նի դադել, նի դեղել,  
Ե՛վ կարծել՝ ոչինչ էլ չի եղել...

Ես հիմա խորհում եմ շփոթված.  
Մեր առջև, տաշտակն է այն կոտրած,  
Դոփում են տեղում և քայլում հետ.  
Հետրնթացն այս չունի՞ վերջակետ...  
Մեր բախտն իր կյանքի հունն է շեղել,  
Բայց, կարծես, ոչինչ էլ չի եղել...

ՉԱՐՆ ԱՅԴ ԴԱՎԱՃԱՆ  
Թագավարակ է ամբողջ աշխարհում,  
Ամբողջ երկրումս թագակոխիվ է.  
Թագ ունեցողը իր գահն է պահում,  
Կյանքն այստեղ, ավա՞ղ, խառն ու խոփվ է...

Երկրիս երկնքում սև-մութ թուխապեր են.  
Ամեն պահ կռվի դրիբդ է, որոտ...  
Զարն իր չարյաց հետ թուրքին ուխտել է

Երկիրս զոհ տալ նեռին այդ արնոտ...

Սոռան՝ և է նա՝ չարն այդ դավաճան,  
Որ հիշողությունը և ժողովուրդն ունի,  
Որ պատմությունը չի ների նրան.  
Կարձանազրի փաստն այդ անկումի...

Գիտակցո՞ւմ է նա՝ դավաճանն այդ պիդ,  
Որ սև խարան է ձակատին կրում,  
Որ չի ազատվի Աստծո անեծքից.  
Դատավճրոն իր հենց ի նքն է զրում...

Տարիներ կանցնեն և կանցնեն դարեր,  
Մերունդներ կգան, կգնան հերթով...  
Թագեր կթռնեն, կփլվեն զահեր,  
Երկիրս, սակայն, կմնա վերքով...

ՎԱԽԵՆՈՒՄ ԵՔ  
Հոգիս ցավից մթնդել է,  
Սևակնել է բախտը հայոց,  
Սիրտս զինու պես թնդել է.  
Երկրիս դեկին նստել է օձ...

Գործերը՝ չար, ընթացքը՝ ծուռ...  
Ուր է սողում օձն այս թունոտ.  
Քարշ է տալիս մեզ մութ ծակուռ,  
Ուր ոչ թե հաց, ուսում են խոտ...

Բայց մենք լուր ենք ու պապանձված.  
Ինչո՞ւ... ախր, մարդ ենք ասուն...  
Քար էլ աղան գլխին մեր բաց՝  
Մենք, քար կտրած, բառ չենք ասում...

Վախենո՞ւմ ենք... սակայն ումի՞ց...  
Մեր տաքացրած օձի՞ց այդ նենգ,  
Այդ թուրք ոսոխ արնախումի՞ց,  
Մահի՞ց, կյանքի՞ց... չէ՛, դա մենք չենք...

Այս թմբիրից մենք դուրս կգանք,  
Կշախախենք զլուխն օձի,  
Աշխարհն ու մեզ լավ թափ կտանք,  
Եվ թո՛ դ թուրքը բախսն իր կոծի...

### ՈՎԿՄԱՐԴ

ՈՎԿՄԱՐԴ, այս կյանքում դու մի քիչ՝  
Աստծո տվածով գոհացիր,  
Քեզ զզա մարդկանց բախտակից.  
Ուրիշից բախտ մի գողացիր...  
Թե մի օր ընդվզես հոգով,  
Չարի դեմ դու լոկ խոյացիր...  
Կյանքում ամրացիր դու ոգով.  
Մարդ մեռիր գերմարդ գոյացիր...

### ԲԱՆ ԶԻ ՓՈԽՎԻ

Աշխարհում բան չի փոխվի՝  
Որքան էլ նստեմ, մտածեմ.  
Այս կյանքն է բարձիթողի.  
Ես ինչպէ՞ս արյուն չլացեմ...  
Ով եկավ՝ լափեց, գնաց,  
Մարդիկ՝ ի՞նչ... թո՛ դ որ արածեն...  
Նեռն, ավա դ, հաստատ մնաց.  
Ես նրան ինչպէ՞ս հալածեմ...

### ԻՆՉՊԵ՞Ս

Աշխարհի դեմ այս խելառ  
Ի՞նչ կարող եմ անել, ասա՞,  
Խառնվել են զայլ ու զառ.  
Ինչպէ՞ս զլուխ հանել, ասա՞ ...  
Ամեն ինչ գորշ է, ճղճիմ.  
Ճահճում ինչպէ՞ս բանել, ասա՞,  
Տե՛ք, թողել եմ քո խղճին.  
Խաչն այս ինչպէ՞ս տանել, ասա՞ ...

## ՀՈԳՍԵԼ ԵՄ

Հոգնել եմ խոսքից ձապաղ.  
Ձևը՝ շատ, միտքն է խիստ զիջում,  
Բառերն են թափվում պաղ-պաղ.  
Իմաստակում են ու վիճում...  
Խոսքերն այդ ունայնամիտ  
Ճշմարտի կայծն են լոկ շիջում.  
Օրենքը դարձրել են հիթ  
Օրենքի հերն են անիծում...

## ԲԱՐԴ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Այ քեզ բարդ ժամանակներ...  
Ինչո՞ւ են ուտում իրար միս...  
Թշնամի բյուր բանակներ.  
Եվ սպանում են, և լալիս...  
Մարդուն կյանքն ի նշ է անում.  
Մարդուց մարդահոտ չի գալիս.  
Թե աշխարհն ուր է տանում  
Դարն իրեն հաշիվ չի տալիս...

## ՉԵ՛, ԿԱՆՑՆԻ

Մեր կյանքը սեռվ պատվեց.  
Սկսվեց, ավա դ, սև շրջան...  
Մեր լույսը մութով հատվեց.  
Լայն ճամփան դարձավ նեղ կածան...  
Ամեն ինչ գնաց վատին.  
Մեր գործերն անվերջ լրջացան,  
Կույրի պես դիպանք պատին,  
Եվ մարդիկ ցավից մնշացան...  
Գլխներին քար էլ աղաս,  
Քարի պես մունջ են՝ քար-արձան,  
Անտարբեր, ցավից անմաս.  
Այս է ըք անսիրտ ու պաղ դարձան...  
Դա մենք ենք... նման չենք մեզ.

Այսքան էլ մենք մեզ անարժա՞ն...  
Սև շրջանն այս աներես  
Չի անցնում... պատի ժ է դաժան...  
Բայց որքա՞ն պիտի մնա.  
Չե՛, կանցնի... կզա նոր շրջան,  
Կցոլա լույսը նրա,  
Կծպտա՝ որպես լալ-մարջան...

ՄԱՐԴ-ՀՐԵՇԸ  
Հրեշը պատերազմի  
Զարթնել է ուզում ամեն պահ,  
Հնչեցնել շեփոր ռազմի,  
Տարածել ավեր, նախաձիր, մահ...  
Մարդ-հրեշն այդ հրեշից  
Չի սարսում, չունի ոչ մի ահ.  
Նա է, որ մահվան լեշից  
Կորզում է ոսկի, հող ու գահ...

ԱՇԽԱՐՀՆ Ի՞ՆՉ...  
Երեկ է նստակյաց դառել  
Բարբարոս, քոչվոր այս ցեղը.  
Քրտինքը դեռ չի սառել,  
Դեռ թաց է սմբակի ցեկը...  
Բայց այսօր հոխորտում է,  
Մեզ վրա ցնցում իր բեղը.  
Բութ գլխում դեռ հորդում է  
Տափաստանի սև հեղեղը...  
Չի ուզում մեր ապրելն իսկ  
Մեր բնօրրանում՝ այս ծեղը.  
Արյունոռուշն այս ամբարիշտ  
Փորձում է զցել մեզ նեղը...  
Աշխարհն է նայում անփույթ.  
Նրան ի՞նչ մեղավոր-անմեղը...  
Ո՞չ պատիվ ունի, ո չ գութ.  
Չարին չի դնում իր տեղը...

## ՄԵՐ ՑԱՎԸ ՉԱՓԵՑ

Քացախի պես պճպճաց,  
Իր ժահրը մեր զլիսին թափեց,  
Թույնի հին տիկ էր փշած.  
Այդ ովք բերանը թռւյլ կապեց...  
Ինքն իրեն եռաց ներսից,  
Եփ եկավ, ձչաց ու ծափեց,  
Փրփրոտեց ինքն իր հերսից,  
Մեր ջիղ ու նյարդերը լափեց...  
Կարո տ մնացինք լավին.  
Բախտն այս հարցում էլ մեզ խարեց...  
Կյանքը դաշնակցեց դավին.  
Իր դավով մեր ցավը չափեց...

ԻՆՉՈ՞Ի ԵՍ ՎԱԽԵՆՈՒՄ, ԱՇԽԱՌՀ  
Ինչի՞ց ես զգուշանում,  
Ինչո՞ւ ես վախենում, աշխա՞րհ,  
Թուրքն ինչպիսին էր հնում՝  
Այսօր էլ նույնն է, նույնն է հար...  
Նույն ոճրագործն է անսիրտ,  
Նույն բարբարոս ազգն անկատար,  
Նույն մարդակեր նեռն է բիրտ,  
Նույն արնոտ ձամնիան անխաթար...  
Քեզ կուրացրել է ոսկին'  
Թուրքի խղճի պես սև, աշխա՞րհ,  
Տրված բոզ դարիոլ հոսքին՝  
Չես բռնում այդ թաթն անարդար...

## ԽԱՐԱՆՆ Է ՍՍ

Քարանձավից դուրս է եկել  
Նրա վայրի բնակիչը.  
Դեռ չզիտի կարգին հեզել,  
Բայց ջոկում է շատն ու քիչը.  
Թաթն է մեկնում մեծ պատառին  
Նա՝ մարդկության անարգ բիճը,

Չտաս՝ հում-հում կպատառի,  
Եվ չի տանջի չեղած խիղճը...  
Հեզ մարդկության սեզ ճակատի  
Խարա նն է սա, ո՞չ թե բիծը.  
Իր վիժվածքին, սակայն, կատի՞...  
Խորանո՞ւմ է իմ կսկիծը...

**ԹՈՒՐՔԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**  
Անհող, անարմատ, քոչվոր ցեղախումբ,  
Որ մի օր իջավ պատմության մեծ բեմ  
Եվ ատելությամբ չար ու անհագուրդ  
Ելավ մարդկության, արդարության դեմ...

Արյունով գրված մի մութ պատմություն  
Եվ ստի վրա հիմնված երկիր,  
Անիրավությամբ սարքված պետություն.  
Դրա կեղծիքից, Աստված իմ, փրկի բ...

Աթարից սերված ոմն Աթաթյուրք  
Չափեց ու ձևեց հայրենիքն այլոց,  
Վաստակեց միայն բյուր անեծք ու թուք  
Եվ հավերժ մնաց մեղքի տակ հայոց...

Ցեղասպանություն գործած մի բութ ցեղ՝  
Հայրենազրկված հայերի հողում...  
Անրույժ վարակ է թուրքը ամեն տեղ.  
Արյան վրեժից հենց ինքն է դոդում...

Շինծու, թլպատված, արնոտ պատմություն  
Եվ ոճրագործ թուրք... է՝ հ, թո՞ղ ո հուսա նա...  
Մե՛կ է՝ կա՛ ոճիր, կա՛ և հատուցում.  
Պատմության դատը, չէ՛, չի ուշանա...

**ՉԻ ՄՈՌԱՅՎԻ**  
Որքան էլ որ կյանքը փոխվի՝  
Նույն գորտն է և նույն ճահիճը,

Որքան էլ որ սիրով ցողվի՝  
Նույն սեքսն է և նույն մահիձը...  
Թեկուզ քաշեն թույնն էլ նրանց՝  
Նույն օձն է և նույն կարիձը...  
Չի մոռացվի հազար դար անց՝  
Նույն զոհն է և նույն դահիձը...

### ԱՐԴԱՐ ՉԵ

Նորից՝ մի նոր մահ, նոր բոր.  
Աշխա թի իմ, այս ո՞ւր դու հասար...  
Զահել էր, զվարթ, անհոգ...  
Սոր կանչին գոնե Տերն անսար...  
Մինստ լյն է՝ զահել, թե ծեր.  
Այստեղ են աչքիդ հավասար...  
Բո կշեռքն արդար չէ, Տե՛ր,  
Զահել կյանքն արժե բյուր հազար...

### ՑԱՎԻՑ ԲԱՑԻ

Ո՞վ ասաց, թե ինչ լինում է՝  
Մեռնողին է լինում միայն.  
Մեռնողին՝ ի՞նչ... ով մնում է՝  
Ցավի ցեցն է ուտում նրան...  
Մեծ եղեռնը վերապրածի  
Հոգին մտիր ու քննի ր այն.  
Կտեսնես, որ, ցավից բացի,  
Ո՞րոն է խժոռության...

### ՀԱՅ ԿԻՆ ԵՄ

Ես կին եմ՝ խղճից շատ թույլ,  
Տերն ինձ տվել է սիրտ և խելք.  
Չարության ոչ մի նշույլ  
Իմ հոգում տեղ չունի երբեք...  
Կյանքումս գութ է որոնել  
Իմ սիրող սիրտը հոգնաբեկ.  
Մըջուն իսկ չեմ տրորել,

Հուզվել եմ, արտասվել մեկ-մեկ...  
Հայ կին եմ՝ օջախ և տուն,  
Անշափ գթոտ է սիրտն իմ հեզ...  
Բայց թուրքի հանդեպ արնախում  
Իմ ձեռքը չի դրդա երբեք...

ԻՄ ՀՈՂՆ Է ԲԱՆՏՎԱԾ  
Ծաղկունք ու կյանք է այստեղ.  
Գարունը վաղուց տանտեր է...  
Ջունե մի ճերմակ պաստեղ  
Իմ այգուց մի թիզ բանտել է...  
Ջունն ի՞նչ է... արև կանի...  
Իմ հո՞ն է բանտված... անտեր է.  
Ճրեշն այն յոթ զլիսանի  
Ճամփա ու կամուրջ քանդել է...  
Չզիտեմ՝ սա բա՞խտ է չար.  
Որ մեզ ձիզ դարեր շանթել է...  
Իսկ Աստված կանգնել անձար,  
Չեռքերն իր մեջքին կանթել է...

Ի՞ՇՊԵ՞Ս ԵՎ ԵՇՔ  
Չզիտեմ՝ ինչպե՞ս և ե՞րբ  
Թուրքը իր տեղը կորվի. Գազանին այդ մարդակերպ  
Ե՞րբ մի ճիշտ պատիժ կտրվի...  
Թե թողնեն ձեռքերն արձակ  
Աշխարհն արյան մեջ կխրվի...  
Տե՛ր, մի՛ թող չարը տա ձագ.  
Չարի արմա տը կտրվի...

Է՛Լ Ի՞ՆՉ Է ՊԵՏՔ  
Աշխարհի ա՞չքն ենք հանել,  
Որ մի աչքով է նայում մեզ...  
Չենք սիրել գլուխ տանել,  
Լինել թուրքի պէս աներես...  
Մենք մեզնով կանգնել ոտքի

Եվ զորացել ենք Մասսի պես,  
Չենք զրկել մենք ոչ ոքի.  
Փրկել ենք, զրկել սիրակեզ,  
Արարել վեհն ու բարին  
Մեր իսկ հանճարով իրատես,  
Է լինչ է պետք աշխարհին,  
Որ երկո՛ւ աչքով տեսնի մեզ...

ՀՈԳԻՍ ՀԱՎԱՏՈՒՄ Է  
Եվ ո՞վ է, սակայն, որ մեզ  
Ատելով ատում է կյանքում.  
Մարդաչնման մի ցեղ,  
Որ միայն լափում է կյանքում.  
Լափում մեր ինչքն ու հողը,  
Աշխարհին խաբում է կյանքում.  
Աշխարհում մեր ոսոխը  
Մեզ լափում, ծափում է կյանքում...  
Աշխարհին թլպատում է.  
Խե՞ դժ աշխարհ... տափում է կյանքում...  
Բայց հոգիս հավատում է,  
Որ Աստված դատում է կյանքում...

ԱԶՆԻՎ ՑՈՐԵՆ  
Մենք ազնիվ ցորեն էինք՝  
Աշխարհի ցանքսի սերմացու,  
Բայց եղավ մեծ արհավիրք.  
Խորշակը խփեց մահացու...  
Եվ սփռվեցինք մենք լուռ,  
Աշխարհում գտանք տարածում.  
Չուզեցինք կորչել իզուր  
Նենգ թուրքի ջարդի աղացում...  
Ցրվեցինք հատի կ-հատի կ,  
Աղ դարձանք աշխարհի հացում...  
Չաձեցինք բազմապատիկ.  
Հիմա մի բուռ ենք, մի ածու...  
Մենք ազնիվ ցորեն ենք հար.

Ժեռ քարին կլ ենք մենք աճում...  
Հանձարեղ մեր հացն արդար  
Աշխա րին է հիմա աղաչում...

### ԽՈՍՔԸ

Մեր զենքը պահենք միշտ սուր,  
Չխարվենք խոսքին ոսոխի.  
Մեր նախնյաց խոսքն է հզոր,  
Ոչթե՝ վայրահաչ խոսողի...  
Թուրքն էլի մի՛ շտ նույն թուրքն է.  
Թողնենք՝ մեզ նորի՞ց հոշոտի...  
Մարդկության անբույժ թութքն է.  
Խոսքն ի՞նչ է խիղճը քոսոտի...

ԱՅՍ Ի՞ՆՉ ԴԱՐ Է  
Այսպես կլ բա՞ն կլինի.  
Ուր գնաս ոտքիդ տակ քար է,  
Աշխարհը մեղքով է լի.  
Ժխտումը, է՛ հ, խաղ ու պար է...  
Խոտոր է կյանքիդ ճամփան,  
Երդումը սոսկ դատարկ բառ է,  
Հարդի է մարդը անբան.  
Փո չը աշխարհ, ա՛ իս, այս ի՞նչ դար է...

Ո՛ Ի՛ Է՛, ԹԵ...  
Ինչպե՞ս մարդ կոչես նրան,  
Որն աղ է ցանում բաց վերքիդ,  
Պեղում քո տակն ու վրան,  
Որում է խառնում թաց հերկիդ...  
Խեղդվես՝ ջուր չի տա մի պուտ,  
Բայց աչքն է տնկած միշտ ձեռքիդ...  
Ու կը էր, թե նախանձն այդ բութ  
Չղիպչեր հոգուդ ու երգիդ...

## ՍՈՒՏԸ

Մերկանդամ ծառը ցրտից  
Դողում է լարից ավելի...  
Պարզ ու բաց հոգիս ստից  
Մրտում է ծառից ավելի.  
Սուտն այդ հարգի է բարձրում՝  
Օրենքի բառից ավելի,  
Ճշտի՞ն են սուտը բարձում,  
Որ տանի դարից ավելի...

## ՈՉ ՈՔ

Ով ելավ՝ ինձ այպանեց  
Եվ ասաց՝ մեծ է սխալս...  
Մրցակցիս նա փայփայեց  
Նկատեց միայն սղղալս...  
Չնայեց ներսս ոչ ոք,  
Չտեսավ հոգիս, ծխալս...  
Մնացի դարձյալ անօք.  
Խեղդեցի անզամ ծվալս...

## ԱՎԱՇ

Եվս մի տարի անցավ,  
Եվ շա տ-շա տ ջրեր հոսեցին...  
Վերքն իմ չբուժվեց անցավ.  
Իմ մեջ նոր ձայներ խոսեցին...  
Թոշնեց ծարկունքս շատ վաղ.  
Այլ բաներ մարդկանց հուզեցին,  
Ցավից խենթացա... ավա դ,  
Արցո ւնքս տեսնել չուզեցին...

## ՄԱՐԴ-ԳԱԶԱՆ

Աշխարհի վե՞րջն է եկել.  
Պատերազմ, տեռոր, երկրաշարժ...  
Դեռ անվարժ՝ կարգին հեզել,  
Մարդն սպանում է այնքան վարժ...

Ո՞ւ մնաց պատգամն Աստծո,  
Հե՞տ շրջվեց կյանքը հարավազ...  
Նեղին է դա լոկ հաճո.՝  
- Կա՞նգ առ, մա բդ-գազան դարասազ...

ՈՒԶՈՒՄ ԵՍ...

Ո՞ր մեկի ձեռքը բռնես.  
Ուտում են ուղտը փալանով,  
Կզնեն Աստծուն և քեզ  
Հենց իրենց ալան-թալանով...  
Պատրաստ են ազգն ի ծախել  
Եվ ապրել մեղքի խարանով...  
Ուզում ես վերցնել կախվել  
Նրա՞նց իսկ տված պարանով...

ԴՈՒ ԳԻՏԵ՞Ս

Հե՞յ, կա՞նգ առ, գնվա՞ծ ընտրող,  
Ընտրում ես, բայց՝ ո՞ւմ, դու գիտե՞ս,  
Ուղեղդ՝ մի շահ փնտրող,  
Լողում է մուժում, դու գիտե՞ս...  
Շահածդ ի՞նչ կլինի.  
Լոկ կիսատ մի կում, դու գիտե՞ս...  
Նման ես ազահ ցինի.  
Ուտում ես հում-հում, դու գիտե՞ս...  
Չես պահի այդպես ո՞չ ազգ,  
Ո՞չ երկիր, ո՞չ տուն... դու գիտե՞ս...  
Կդառնաս Աստծուց մերժված  
Ազգադավ մի շուն, դու գիտե՞ս...

ԿԽՆԿԵ՞Ն

Ամենքը, դրոշ տնկած,  
Կանչում են՝ մենք ձեզ կփրկենք.  
Մեկմեկու հետև ընկած  
Խնդրում են՝ ձեր դեմ կծնկենք,  
Միայն թե վստահե՞ք մեզ,

Մե՛զ ընտրեք... և ձեզ կիսնկենք...  
Կիսնկե՞ն... երբ մենք շա՞ն պես  
Մեր մահկանացո՛ւն կկնքենք...

ԻՆՉՊԵ՞Ս ԿԸՆՏՐԵՍ...  
Հավատացինք այսքա՞ն տարի,  
Վստահեցինք՝ ինչպես մենք մեզ...  
Բայց մեր բախտը դիպավ քարի,  
Ու սովեցինք առաջվա պես...  
Չդարձավ մեր մեկը երկու,  
Իսկ եղածը դարձավ ձիշտ կես...  
Դե՛, այսքանից հետո Է՛լ դու<sup>՞</sup>  
Այդ նույն մարդկանց ինչպե՞ս կընտրես...

Է՛Լ ԻՆՉՊԵ՞Ս  
Առիթով, թե անառիթ  
Հիշում են Մեծն Տիգրանին,  
Խոսքի մեջ դնելով սիրտ  
Ասում են. «Ծաղկուն էր Անին»...  
Ծովից ծով տարածում են  
Մեր արքայական ծիրանին,  
Բայց իրենց ձուն ածում են  
Պարսիրու օտարի բնում հին...  
Մսիսում են զանձերը մեր՝<sup>՞</sup>  
Ինչպես դուշմանն ու հարամին...  
Է՛լ ինչպե՞ս, ազնիվ ընկեր,  
Ցախ դնենք դրանց պարանին...

ԿԵՂԾԻՔ  
Որքան էլ մեծարեն քեզ՝  
Դրանից դու մեծ չես դառնա,  
Ծեքծեքա՞ն դու աստղի պես՝  
Չես լինի աստղ դու վառման...  
Կեղծիրի մեղքի բեռը  
Մի՛ թող խեղճ հոգիդ լուր բառնա,

Մի՛ թող սուտ փառքիդ լեռը  
Հոգուդ հետ երկինք համբառնա...

ՎԱՐՈՒՄ, ԹԵՇ ՎԵՐՈՒՄ  
... Իսկ նա կարծում է,  
Թե հենց ի՞նքն է այն հաստատուն այունք,  
Որն Ատլասի պես  
Իր ուսերին է պահում տանիքը  
Եվ ամբողջ տունը...  
Թե, իբր, իրեն անվերջ բարձում են,  
Եվ ինքն անտրտունջ, ինչպես բանող եզ,  
Իր ծանր լուծն է քաշում օրնիբուն...  
Թե ամեն ինչում ի՞նքն է, լոկ ի՞նքը՝  
Այն միակ խելոք գլուխը, որ կա,  
Միակ անողը,  
Միակ բանողը,  
Որ չունի դադար՝ ո՛չ հանգիստ, ո՛չ քուն...  
Բայց, Աստված վկա,  
Հենց նա՝ է մարդկանց հոգին հանողը՝  
Անվերջ ձռոցով,  
Անվերջ դռոցով...  
Հենց նա՝ է անվերջ գլուխ տանողը,  
Թե տեղը-տեղին  
Իրեն չեն գովում,  
Թե չգիտեն իր կշիռն ու հարզը...  
Նրա խոսքի մեջ ի՞նչ շատ է մաղձը,  
Թույնը և լեռին...  
Ել ինչպես չասես՝  
Հապա մի լա վ տես,  
Ախր, հենց տեղից ծո՛ւռ է ատաղձը,  
Եվ ինչպես դասվես լորերի կարզը,  
Երբ ինքդ չորուկ ճնճղուկ ես, որ կաս...  
Ու քեզ որքան էլ դու պատեպատ տաս,  
Մե՛կ է, կլորիկ լորիկ չե՞ս դառնա...  
Եվ ինչպես չասես՝  
Դու ի նքդ թեկուզ  
Երուսաղեմ էլ բոքիկ ոտքերով

Վեր կենաս գնաս ու վերադառնաս,  
Միևնույն է, ով՝ ով,  
Իսկ ինքդ դարձյալ սրբերի հանգույն  
Լուսապակի ասպետ չես դառնա...  
Ախր, ինչ կա՝ կա,  
Դու, որ հերիաքի չար թզուկի պես  
Մեջքիդ ունես կուզ  
Եվ փոփոխում ես օրը տասը գույն,  
Մե՛կ է, չես կարող բոլորի աշքին  
Երևալ որպես չքնա դ Հեղինե...  
Քո սրտից ծորած խոսքիդ լեղին է  
Քո իսկ թշնամին...  
Վերջապես, անզի՞ն, զլիիցդ հանի՞ր  
Այն անդուր քամին,  
Որը հատուկ է մեծամիտ մարդկանց,  
Վերջապես, քեզնից դու ի բաց վանի՞ր  
Ե՛վ քեն, և՝ նախանձ...  
Ապրի՞ր մեզ նման և բոլորիս պես՝  
Խաղաղված հոգով, զուլալված սրտով,  
Հվատով, սիրով... և ո՛չ թե ստով,  
Որը նման է երկսայրի սրի՝  
Ունակ պատմելու ոսդիդ և քեզ...  
Դու վարձ մի՞ ընտրիր ծափերը ձրի.  
Վաստակի՞ր դրանք,  
Հստակի՞ր դրանք...  
Այնժամ դու կզգաս լոկ քամահրանք  
Բոլոր ծափերի, ինկարկման հանդեպ...  
Մի բան էլ ի դեպ,  
Եթե երբեք քո բախտը բանի  
Եվ քեզ սին փառքի գազաթը հանի,  
Գոնե մեկ անզամ փորձի՞ր նայել ցած,  
Նշմարել այնտեղ գտնվող մարդկանց,  
Նրանց աշքերում  
Տեսնել քո երեկն ու ճամփերն անցած,  
Լուր ծանրութեթե անել իրական  
Քո կյանքն ու բախտը  
Եվ խղճի մտոք՝ կամքով տիրական  
Որոշել՝ ո՛վ է կյանքում անհաղթը...

Եթե դու ես, լա՞վ,  
Պարզի՞ք, ուրեմն, որտե՞ղ ես, իրա՞վ,  
Վարո՞ւմ, թե՞ վերում...

### ՊԵՏՔ Է

Գերմարդ էլ մարդը դառնա,  
Թեկուզ և քոչի տիեզերք,  
Նա պետք է ունենա միշտ  
Հայրենի օջախ ու եզերք...  
Օրերում մեր այս խառնակ  
Պետք է ունենա սիրտ ու խելք,  
Իր կյանքը դարձնի սկիզբ  
Եվ ինքն էլ դառնա տիեզերք...

### ԴԵՌ ՇՈՒԾ Է

Քառս է իմ չորս կողմը.  
Ո՞ւր գնամ, պարզ չէ. դեռ մութ է...  
Քշում է խոսքի հողմը.  
Ո ոմ կառչեմ, ո՞ւմ... խոչ ու խութ է...  
Վստահե մ կյանքս... բայց՝ ո՞ւմ...  
Աստված՝ խուլ, մարդն էլ անգութ է.  
Թույլ եղա՝ կուտեն հում-հում...  
Լույսն էլ չի բացվում. դեռ շո՞ւտ է...

### ԱՅՍՊԵՍ Է

Ա՞խ, ես ի՞նչ օրի հասանք.  
Ո՞նց են խառնվել չոր ու թաց,  
Փոշտանք կամ թե հազանք  
Մե՞կ է. գրպանդ դու լայն բա՞ց...  
Ճանաչի՞ք վերն ու վարք,  
Գիտո՞ւն ես, ոչի՞նչ... տե՞ղի կաց...  
Այսպե՞ս է փուչ աշխարհը.  
Ազնի՞վ ես՝ կուտես ցամաք հաց...

## ՓՈ՛ԻՉ ԱՇԽԱՐՀ

Փո՞ւ չաշխարհ... մայրն իր որդուն  
Չի սիրում, եթե շահ չունի.  
Արքան իսկ որք է, անտուն,  
Չի տիրում, եթե զահ չունի...  
Պահում են յոթ փակի տակ  
Արդարին, եթե ահ չունի,  
Բարուն կ նեռ-չարն անհազ  
Խժոռում է, եթե մահ չունի...

## ԹՈ՛Ղ ԶԱՏԻ

Ելնեմ ու սարը գնամ.  
Ոչ ոք չիմանա իմ տեղը...  
Հոգնե լ եմ... մենակ մնամ.  
Անդորրը լինի իմ դեղը...  
Եվ թո՞ դ ինձ Տերը դատի.  
Նոյն բա՞նն են զերանն ու ծեղը...  
Թո՞ դ ճիշտն ու սուտը զատի,  
Վերացնի ստի հեղեղը...

## ՑԱՎՆ ԱՅՆ Է...

Վանդակը, իբր, քիչ է,  
Սարդն կ կապել է սարդոստայն...  
Բաց ծով է, թե ճահիճ է՝  
Հայրենի տուն է և ոստան...  
Բայց, դե՛, ցավն այն է, մարդի կ,  
Որ մեծ այրերը ոստոստան  
(Դեռ երեկ խեղճ, անվարտիք...)  
Ոստանը դարձրել են բոստան...

## Է՛Լ ԲԱՌ ՉՄՆԱՑ

Հատեցին ոստ ու ճյուղեր.  
Մերկ բուն է. է՛ լ ծառ չմնաց,  
Դրյակներ ու խեղճ հյուղեր.  
Խիղճն է քար. է՛ լ քար չմնաց...

Թափեցին փոր ու փսոր.  
Դուրս պրծան. է՛ լ շառ չմնաց...  
Միտքն՝ ամուլ, իսկ խոսքն՝ անզոր.  
Աստրծուն է՛ լ բառ չմնաց...

ԴԵՌ ՀԱՐՑ Է...  
Այնպէ՞ս է փոխվել կյանքը...  
Աշխարհն այս ես չեմ ճանաչում.  
Դեռ երեկ արած ցանքը  
Ծլում է այսօր, կանաչում...  
Բայց ստեղծող մարդը՝ փոշի,  
Ոչի՞նչ է. կյանքն է հալածում...  
Թե աշխարհն ի՞նչ կորոշի՝  
Դեռ հարց է... ե՛ ս եմ ամաչում...

ԱՅՍՊԵՍ ՈՐ ԳՆԱ  
Եռում է կուպրի կաթսան.  
Ովքէ՞ր են այնտեղ խաշվելու...  
Մեր կյանքը՝ օրեր աշնան.  
Կորուստներն ո՞վ է հաշվելու...  
Պայքար է ամեն օրը.  
Ո՞վ է մեր կանչին հասնելու,  
Իջնում է բախտի կորը.  
Արարչին ի՞նչ ենք ասելու...  
Մեր ազգը աշխարհի աղ.  
Որքա՞ն է իզուր մաշվելու...  
Այսպես որ զնա, ավա դ,  
Տապանաքարն է տաշվելու...

ՑԱՎԴ  
Դու ձնշի՞ր ցավի անբուժ,  
Ճշո՞ւմ է՝ փակի՞ր բերանը...  
Միշտ գտի՞ր քո մեջ մեծ ուժ  
Եվ տե՛ս ս քո աչքի գերանը...  
Հպա՞րտ տար ցավի հտպիտ.

Չէ՞ որ կա քոնից վերանը...  
Խորին լրդը պարզիր ցավիդ,  
Որ դառնա բախտիդ մերանը...

### ԵՂԵԼ ԵՆ

Ինձնից առաջ, ո՞վ գիտի՝  
Ինչպիսի սերեր են եղել.  
Ինձ քննախույզ մի՛ դիտիր՝  
Ինչպիսի գերեր են եղել...  
Ա ին, այս աշխարհին անտեր  
Ինչպիսի տերեր են եղել.  
Խժոնել և խժոում են դեռ.  
Ինչպիսի գելեր են եղել...

### ԱՄԵՆ ՊԱՀ

Ամեն պահ՝ մի նոր ծնունդ,  
Ամեն պահ նաև՝ մի նոր մահ.  
Մահվան մեջ՝ կյանքի մի հունդ,  
Մարդու մեջ՝ հավերժ մահվան ահ...  
Այդ ահն իսկ մարդուն անմիտ  
Չի շեղում ճամփից դյուրասահ.  
Նույն մարդն է՝ բութ ու անսիրտ,  
Նույն տեսչն է՝ ոսկի, հող ու գահ...  
Աշխարհ իմ, դու լավ գիտես  
Կյանքը ժուժկալ է, մահն՝ ազահ.  
Հասկացրո՞ւ մարդուն չտես՝  
Մահը կողքի՞ն է ամեն պահ...

### ԱՅՍՔԱՆԻՑ ՀԵՏՈ

Ի՞նչ միամիտն եմ... յեկուզ  
Զվածեղ անեմ ձեռքիս մեջ՝  
Այս մարդիկ ուտում են կուշտ  
Եվ աղ են ցանում վերքիս մեջ,  
Ապրում են իմ իսկ հացով  
Եվ որոմ խառնում հերկիս մեջ,

Ճամփա են բացում լացով,  
Մկնդեղ դնում բերքիս մեջ...  
Այնպես են անում, որ ես  
Տեղ, տուն չունենամ երկրիս մեջ...  
Այսքանից հետո ինչպէ՞ս  
Մեծ ցալ չլինի երգիս մեջ...

### ԽԵԼԱՀԵՂ ՎԱԶՔ

Ամենուր երթ է անկանգ,  
Խելահեղ վազք է, մրցություն...  
Ի՞նչ ուղեղ... զանգ է՝ չոր զանգ,  
Եվ չկա ոչ մի լրջություն...  
Հռետո՞ր... որքան ն ասես,  
Լուրջ գործն է անում քչություն...  
Ամեն ինչ ձև է՝ «տե՛ս-տե՛ս...»,  
Կյանքն էլ դարձել է բճություն...

### ՓՈԽՎԵԼ ԵՆՔ

Փոխվել ենք... աշխարհն ու մենք,  
Ցրտերը հին և տապերը,  
Ով ելավ, խաղացրեց զենք.  
Չեն օգնում արդեն պատերը...  
Հղփացան կուշտերն անհոգ.  
Կտրեցին իրենց կապերը,  
Մեր առջև, քաշեցին խոտ  
Կորցրած խիղճն ու չափերը...  
Քանդեցին երկիրն անխոնչ,  
Ընտրեցին, սակայն, ծափերը,  
Մսիւցին հավատն ամբողջ  
Խնկելով զցել-խաբելը...  
Փոխվել ենք... աշխարհն այս մեծ  
Գալիս են, գնում շատերը...  
Այս կյանքում ո՞վ ի՞նչ արեց.  
Ի՞նչ կասեն մեր մեծ պապերը...

## ...ՈՒ ԳՆԱՄ

Օրերս հետ չեմ բերի,  
Է՞ հ, ձեռքս թափ տամ ու գնամ,  
Կյանքս էլ մնա թերի՝  
Գոհությամբ ծափ տամ ու գնամ...  
Գնալուց առաջ, երկի՛ ր,  
Չար բախտիդ կապ տամ ու գնամ,  
Ամեն ինչ ճիշտ տե ղը դիր.  
Հույսերիս չափ տամ ու գնամ...

## ԱՆԽԵԼՔ ՄԱՐԴ

Ո՛վ մարդ՝ միշտ կյանքից դժգոհ,  
Այս կյանքում ի՞նչ ես անելու՝  
Խինդ ու սեր տուր, առ... գնա՝  
Հավատո՞վ արտդ ցանելու..  
Մի՛ դարձիր ցավի տկանոր.  
Հետո այն ո՞նց ես վանելու...  
Աստծո հետ դու հաշտ մնա,  
Քո բաժին բախտին՝ միշտ հլու...  
Չոր աչքո՞վ ապրիր՝ առանց  
Ուրիշից արցունք քամելու  
Մի՞ գնա ճամփով չարի՝  
Ճիսուսներ խաչին զամելու...  
Միշտ հիշի ր, որ կա Աստված,  
Եվ հոգի ունես դու տալու...  
Անխելք մարդ, խելքի՛ արի.  
Աշխարհից ի՞նչ ես տանելու...

## ԶԻՄԱՅԱՆ

Գլուխս բռնեմ, լացե՞մ,  
Որ զլխս հարզը չիմացան...  
Ո՞ր մեկին սիրտս բացեմ.  
Մարդկային բարքը չիմացան...  
Շա տ էլ թե ցածրացրի ինձ.  
Բմ զինն ու կարզը չիմացան,  
Պոկվում է սիրտս տեղից.

Ա իս, մեծաց վարքը չիմացան...

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
Փոխում է հազար դիմակ,  
Հազար շոր հանում-հագնում է...  
Դանակ է, նաև դմակ,  
Թե ճամփան մի բան փակում է...  
Ինչո՞ւ կ էլ ունկդ խցես  
Լեզու է թափում, թանկում է...  
Կատվի պես՝ ո՞նց էլ զցես,  
Թաթերի՞ն էլի կանգնում է...

ՆՈՒՅՆ ԹՈՒՐՔՆ Է  
Շատ խառն է աշխարհն էլի.  
Խառնակիչն, ի՞նչ խոսք, միշտ նույնն է...  
Աշխարհն է չարությամբ լի.  
Լավի, բարու դեմ նույն կույրն է...  
Նույն թուրքն է նենգաժպիտ,  
Իսկ սրտում նեռն է, սև թույն է.  
Հայասյաց դեն այդ հստպիտ  
Հուդայի քսու համբույրն է...

ՉՔՄԵՂԱՆՈՒՄ Է  
Ելել է հայոց վիշտը  
Մեր բախտի ճամփին՝ բերդի պես.  
Աշխարհն՝ ի՞նչ... սուտն ու ճիշտը  
Սոսկ ունկն են խցել բրդի պես...  
Հայոց հարցն արդար լուս է,  
Բայց չարչրկվում է սրբի պես,  
Մինչդեռ թուրք-արնասույզը  
Չքմեղանո՞ւմ է լրբի պես...

ԻՆՉՊԵՍ ՇՈՒԾ  
Որտեղ էլ մտնի թուրքը՝

Կփորձի անել իրենով.  
Կկախի ոչլոտ քուրքը  
Եվ կասի՝ ես՝ ո՛վ, իսկ դու՝ ո՛վ...  
Կփոխի տան անունը  
Տիրոջն, իբր, շատ սիրելով.  
Կքծնի ինչպես շունը  
Տիրոջն ու տունը տիրելով...

### ՄԻԱՑԵՇ

Մեր հույսը միշտ մե՛ զ վրա  
Մենք պիտի դնենք, իմացե՛ք,  
Եվ պետք չէ սրա, նրա  
Փեշերից կախվենք, դիմացե՛ք...  
Մեր ցավը միայն մերն է.  
Չի կիսի ոչ ոք, մի՛ լացեք...  
Մեր զենքը հենց մեր տերն է.  
Մեծ կռվի ժամն է, միացե՛ք...

### ՄԱՐԴԸ

Աշխարհն այս որքա՞ն թշվառ է.  
Կյանքը մի փշուր նշխար է,  
Ապրելն ահավոր դժվար է,  
Մեռնելը դժվար է առավել...

Մարդն էլ խելք և գութ չունենա՞,  
Արցունքի մի պուտ չունենա՞,  
Դժոխք հոգու խուփ չունենա՞.  
Ա՛խ, որքա՞ն դեռ պետք է տառապել...

Ինքն իր նմանին մորթում է,  
Ինչքն ու պատիվը շորթում է,  
Դեռ բնազդների խորքում է.  
Աշխարհն է դարդերից պառավել...

Այն, որ անմիտ է, դե՛ , փաստ է.  
Անզամ Աստծու հետ անհաշտ է,

Տրված սև ներին՝ պատրաստ է  
Աշխա՛րհը նորիցնոր քառատել...

### ԹՈՂ ՄԻՇՍ ՀԻՇԻ

Որքան էլ կկվի ճուտը  
Մեծանա բնում ուրիշի,  
Կբացվի մի օր սուտը.  
Չի փոխվի ջուրը կումիսի...  
Չի թոշի արծվից բարձր,  
Նրա ձախրանքը չի կիսի...  
Թո՞ դ ապրի կյանքն իր քաղցր,  
Բայց որ կկու է՝ միշտ հիշի...

### ԺԱՄՆ Է

Շա՝ տ ուշ հասկացանք, որ հայրենիք,  
Երկիր պահողը միշտ մենք ենք, որ կանք.  
Մեր մաշկի՝ վրա դա զգացինք,  
Հայի հետին խելքով դա հասկացանք...

Ովքեր որ եկան՝ միայն տարան,  
Քանդեցին ու կերան... օ՛, ի նչ ամոթ...  
Ժամն է, որ ընտրենք մենք անվարան  
Հայի հետին խելքով՝ մեզ առաջնորդ...

### ՄԵԶ ՏՐՎԱԾ ԿՅԱՆՔԸ

Ապրում ենք մենք մեր երկրում՝  
Մեր բաժին լուծը քաշելով,  
Մի փոքրիկ լավից բերկրում,  
Պար զալիս ուռա -տաշերով...  
Ծնվողին մաղթում բարին՝  
Մեր զինու առատ թասերով,  
Մեռնողի յոթն ու տարին  
Տալիս ենք՝ քարը տաշելով...  
Ապրում ենք Աստծո հետ հաշտ՝  
Մեզ տրված կյանքը մաշելով,

Եվ ցմահ փնտրում ենք բախտ՝  
Դառնազին «Հե՛յ-վա՛խ...» ասելով...

ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ ՔԵԶ  
Աղմկում է լրությունը  
Ականջներիս մեջ.  
Քարին թառած գորշ թոշունը  
Հարցական է մեծ...

Փետուրներով իր զգգոված  
Խրտվիլակ է սին,  
Ասես, կյանք է մի խզբոված,  
Վաղն՝ Աստծո հույսին...

Ո՛չ թոշում է, ո՛չ՝ կրնչում.  
Լուռ է, ո՛չ մի ճիշ...  
Կյանքի հո՞ւրն է շիշել, ինչո՞ւ...  
Ախր, օրն է շինչ...

Վաղուց չկա ո՛չ մի թնդյուն.  
Ո՛չ մի կրակոց...  
Լոռություն է. խինդն է թնդում,  
Մահվանն ասում՝ ո՛չ...

Բայց թոշունն այս՝ սև սզավոր,  
Լուռ է, չի թոշում...  
Թռչել չուզող թոշուն կա՝, որ...  
Այ քեզ խենք թոշո՞ւն...

Մոտ եմ գնում: Ցնցվում է լոկ  
Ու չի փախչում, չէ ...  
Իր թոշնային զլիսով արդյոք,  
Ինչեւ ը չեն անցել...

Տեսել է իր երկրում անծիր՝  
Դժո՞ իսք դուռը բաց.  
Թուրքի ձեռքով սարքած նախաճիր,

Մահ ու կոտորած...

Իր շեն բունն էլ հայի տան պես  
Դարձել է ավեր.  
Իր երկինքն իր սրտի պես թեժ  
Հազել է սևեր...

Զագուկներն իր աչքի առաջ  
Այրվել են ողջ-ողջ...  
Հիմա ինքը խոր վերք է բաց,  
Համակ վիշտ ու խոց...

- Թոփ՝ թ, հոգի՝ ս,- ասում եմ ես,-  
Չէ՝ որ թռչուն ես,  
Երազիդ մեջ առաջվա պես,  
Ախր, թռչոն ոմ ես...

Ճի՛շտ է, մեծ է սրտիդ ցավը,  
Խորն է, անամոք...  
Սակայն զիտե՞ս՝ ո՞րն է լավը.  
Անզոր չես, անօգ...

Խորշակի պես կոխվն անցավ  
Մեր տան վրայով...  
Ավա՞ն, տեսանք բյուր վիշտ ու ցավ  
Ապրեցինք ահով...

Հիմա արդեն անդորր է, տէ՛ս,  
Եվ չկա կոխվ...  
Սիրտդ հե ու թեր, հարդարի՝ թք.  
Հանդերձդ խոփվ...

Թա՛փ տուր դու թեզ և համարձակ  
Թևերդ լայն բա՛ց,  
Վերև՝ նայիր, այնտեղ արձակ  
Երկինքն է, Աստված...

Թևի՝ թ երկինք, իմ սրտի պես

Սավառնի՞ ը ազատ,  
Երկնի արքան զգա դու քեզ  
Որպես երկնի զարդ...

Միայն ուժե՞ղ հոգու վերքը  
Կփակվի շուտով.  
Չէ՞, թևածող հոգու երգը  
Չես առնի կուտով...

Վերաշխնենք մենք մեր տունը,  
Դու քո, իսկ ես՝ իմ,  
Հետ բերենք մեր խաղաղ քունը՝  
Հաշու ու մտերիմ...

Լցվենք կյանքով, չկաշկանդենք  
Թռիչքը հոգու.  
Յոթ փակի տակ չարք բանտենք  
Եվ լինենք տոկան...

Իսկ թե, բան է, չարք նորից  
Կոիվ բորբոքի,  
Մենք կղառնանք արծվի կոհնչ  
Ու շանթող ոգի...

Է՞ լ թույլ չենք տա չարք հաղթի՝  
Սփոելով մահեր.  
Բաց չենք թողնի դեկը բախտի,  
Կճախրենք միշտ վեր...

Դեռ չավարտած խոսքը հոգուս՝  
Թոշունս ձախրեց...  
Հրա շը... տեղով հավատ էր, ուժ,  
Հմայքն էր շատ մեծ...

Թոշունն, ասես, դիմում էր ինձ.  
«Հապա մի ի՞նձ տես...»,  
Ես ձայնեցի ժպտալով ջինջ.  
- Հավատո՞ւմ եմ քեզ...

## ԿԱՆՔ ԵՎ ԿԼԻՍԵՆՔ

Գնում ենք մենք մեր ձամփան,  
Ժեռ քարեր կան մեր հետևում,  
Ոչինչ են հողմերն անզամ.  
Մեզ սարեր կան մեր հետևում...  
Մեր կենաց ջահն է միշտ վառ.  
Շատ չարեր կան մեր հետևում,  
Կանք և կլինենք մենք հար.  
Բյուր դարեր կան մեր հետևում...